

6461

891.99

U-79

2003

2011

Հրատարակութ. Ա. Եղիգարեանցի (Մեծ-Ղարաբիլսեցի).

351.99  
429

ԱՏՎԱՐԱՆ ԱԼԵՔՍԻԳԵԱՆ - ԲՈՒԺԵՑԵԱ.



# ՆԱՇԱՏԱԿ

1069



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Զ.

Տպար. Յ. Մարտիրոսյանցի. || Տիտ. Ի. Մարտիրօսյանց. ||  
Օբելիանովսկայ պլ., դ. № 1/2.

1898

Ն Ա. Հ Ա. Տ. Կ Ը

I.

Գանձակի գաւառի Բանանց, Խաչակապ, Փիբ,  
Կիրանց և Քալհատ գիւղերին մօտիկ, Ղուշղա-  
րա զետի աջ ափից քիչ բարձր, զտնում է  
Նահատակ անուն կրտղ սրբավայրը, ուր ա-  
ւագ չորեքշաբթի օրը ժողովում է շրջակայ  
գիւղերից ուխտաւորների մեծ բազմութիւն՝ Նա-  
հատակի գերեզմանին երկրպագելու համար։ Այդ  
չորեքշաբթին կոչում է «չիք» օր, իսկ Նա-  
հատակ դնալը՝ «չիք» դնալ։ Տօնից մի քանի  
օր առաջ Նահատակի պատմութիւնը բերանից  
բերան է անցնում։ Գիւղի ծերերը պատմում  
են. — «Երբ մենք զարկ էինք դեռ քրիս-  
տոնեալ մեծ թագաւորի պաշտպանութիւնից.  
Երբ անօրէնն աւերտում էր մեր երկիրն ու քան-  
դում մեր տները; Երբ նաև անգութը, պղծում  
էր մեր սրբավայրերն և անպատճում մեր հարս-  
ներին ու աղջկերանց, մեղ պաշտպանելու եկաւ  
հեռու երկիրներից մի անյալտ մարդ, անունով

Доз. ценз. Тифлисъ, 13-го Октября 1897 г.

32/65-ч. հ.

13220-599

Վարդան: Նա մի ջահել-ջիւան<sup>1)</sup> տղայ էր, բոյով-բռսաթով, թև ու թիկունքով, եարազ-ասպար<sup>2)</sup> կապած, սուր ու թուր կախած. առիւծի պէս ուժեղ էր նա, վազրի պէս յան-դուգն: Նրա համար կռւելը զաւարձութիւն էր, արիւն թափելը հանաք, թուրն ու խանչալք խաղալիքներ. բայց կռւում էր միայն վատի հետ, արիւնը ոթում էր անգութից, այն մար-դակերպ գազանից, որը չը դիտէ ինչ է խլողը, ինչ է գութն ու բարութիւնը: Վարդանը կռու-ում անողորմ էր, յետ նահանջել չը դիտէր. առանց ետ ու առաջ նայելու նետում էր նա իշան կրակի մէջ, գնում էր համարձակ դէպի մահուան գիրկը, մի բոպէ անգամ չը մտածե-լով, որ այն ահեղ, սոսկալի գրկց յաճախ չէ լինում վերագարձ երբէք: Վարդանը դուրս էր դալիս կռւի միայն ուժեղ թշնամու դէմ, և դուրս էր դալիս մարդ ու մարդանա<sup>3)</sup>, երես առ երես կռւելու, ալ ոչ թէ գաղտադողի, ծա-ծուկ, թփերի տակից:

Երբ թշնամին թոյլ և անգօր էր լինում նրա դէմ կռւելու, երբ նա զէնք չէր ունենում մօ-տը, Վարդանը նրան երբէք ձեռք չէր տալիս ու անվնաս ճանապարհում էր, ասելով՝ «դնա,

<sup>1)</sup> Քաջ երկտասարդ; <sup>2)</sup> Զէնք; <sup>3)</sup> Աղնելութեամբ;

բալամ, <sup>1)</sup> դնա քեղ համար. բայց միւս ան-դամ, երբ էլի անցնելիս լինես այս ճանապար-հով, զէնք վերցրու հետդ. այն ժամանակ ես քեղ ցոյց կը տամ, թէ ինչպիսի նան է ծնել ինձ. գնա ու պատմիր դաշտի թուրքերին, որ Վարդանը նամարդ<sup>2)</sup> տղայ չի, որ նա ձեղ-պէս անդէնի դէմ զէնքը ձեռքին զուլս չի դա-լիս երբէք:» Երբ պատահում էր կռւում, Վարդա-նը վերցնում էր նրա վրակց թուրը, միջից կոտրում էր, թքում էր վրան ու շվրտում մի կողմ, ասելով՝ «նամարդ, դու արժանի չես վրադ թուր կրելու, և պիզծ է այդ թուրը, որը դու չը կարողացար ներկել քո թշնամու արիւնով. նահաթ<sup>3)</sup> քո տղամարդութեանը, հարամ ըլի փափախդ, դնա ու դլխիդ կնկալ լաչակ<sup>4)</sup> կապիր, նատիր տանը, թել մա-նիր ու կարպետ գործիր. դու տղամարդ չես այսուհետեւ:» Նամարդ թշնամին դնում էր ու էլ երբէք չէր համարձակում կոխել Վարդանի հանդափարը<sup>5)</sup>). Նրա տուած թուքն ու մուրը մահուան հարուածի չափ ծանը էր միշտ նա-մարդի համար: Վարդանը գիշեր-ցերեկ հանգիստ չը դիտէր. իրան պէս մի խումբ քաջեր հաւա-

<sup>1)</sup> Բարեկամ, տղայ: <sup>2)</sup> Անազնիւ, անպիտան: <sup>3)</sup> Ամօթ: <sup>4)</sup> Կանանց գլուխ զարդ: <sup>5)</sup> Երկիրը, ըրջանը;

քած' նա ահաբեկում էր անօրէններին, որոնք  
շատ սակաւ էին համարձակում երեալ մեր  
սարերում ու ձորերում։ Վարդանն իր խմբով  
պահում էր անմատչելի լեռներում։ Ի՞նչպէս էր  
ապրում, ի՞նչպիսի օր ու կեանք էր քաշում նա  
այստեղ, այդ հեշտ է պատմել ու երեակայել,  
բայց տանել տարիներ շարունակ այդ կեանքը,  
միայն նրա պէս հերոսներին է մատչելի։ Նրա  
ու իր ընկերների համար ոչինչ էին ցուրտն ու  
սառնամանիքը, սովոր ու ծարաւը, չոր ու ցուրտ  
այրերը, ուր նրանք երբեմն հանգիստ էին  
գտնում. անանցանելի կիրճերը, սեպաձև ժայ-  
ռերն ու փշոտ մացառները, որոնց միջավ նը-  
րանք յաճախ անցնում էին ու անհետանում  
թշնամու աչքից։ Երբ հարայն <sup>1)</sup> ընկնում էր  
զիւղերը, Վարդանն իր խմբով դուրս էր զալիս  
իր դարանից <sup>2)</sup> ու կայծակի արագութեամբ հաս-  
նում էր օգնութեան անդէն, անպաշտպան ժո-  
ղովրդին. նա կոտրում, բրդում, ջարդում էր  
անօրէններին ու կրկին թռչում իր անառիկ,  
իր ազատ լեռները։ Պատահում էր, որ հար-  
կամ աղջիկ էին փախցնում որ և է զիւղից,  
խաբարը դուշի թւեով իսկոյն գնում, հասնում  
էր Վարդանին. նա լուրն առնելուն պէս իր

<sup>1)</sup> Վտանգի լուրը; <sup>2)</sup> Ապաստաբանից։

ջլւան քաջերով իջնում էր լեռներից դաշտ,  
ուր թշնամին այլ ևս չէր կարողանում պրծնել  
նրա ձեռքից։ Վարդանի սուրբ աջ ու ձախ ան-  
խնայ բրդում էր թշնամուն, որի ձեռքից խլե-  
լով թանկագին դանձը, կրկին դարձնում էր  
նրան իր տիրօջը։

## II.

Դէ էլ ինչպիսի սիրո կարող էր դիմանալ  
Վարդանի առաջ. քարն անգամ զգացմունք կը-  
ստանար, եթէ դրած լինէր նրանց կրծքե-  
րում, որոնց Վարդանն ազատում էր գերութիւ-  
նից ու հալածանքներից, որոնց համար նա իր  
ծաղիկ կեանքը մահացու վտանգների էր են-  
թարկում միշտ։ Վարդանի անունն անգամ հալ  
ու մաշ էր անում ջահիլ-ջհուլ <sup>1)</sup> հարս ու աղջ-  
կերանց սրտերը, բայց նրան ոչ ոք չէր զերում.  
նա մնում էր բոլորի համար հաւասար եղբայր,  
բոլորի պահապան հրեշտակ ու միշտ ազատ  
պահում էր իր լեռներում։ Ամեն տարի չամ-  
բարձման տօնին, երբ աղջկերքը գնում են կար-  
կաչոս առուակների ափերի մօտ ծաղիկներով  
վիճակ դցում, իրանց սրտերի դարդերին <sup>2)</sup> դար-  
ման <sup>3)</sup> փնտռում, առաջին վիճակը դցում էին

<sup>1)</sup> Ջատ երիտասարդ; <sup>2)</sup> Ցաւերին; <sup>3)</sup> Դեղ։



Վարդանին, բայց նա ոչոքի չէր վիճակում,  
կարծես աղջկերանց մէջ նրան արժանի ոչոք  
ըլ կար, կարծես ինքն Աստուած նրա համար  
մի թաքուն տեղ մի չը տեսնուած հիւրի-փեա-  
րի էր<sup>1)</sup> կնամքով պահում-պահպանում։ Ան-  
ցաւ մի քանի տարի։ Վերջապէս գտնուեց Վար-  
դանի համար այդ հիւրի-փեարին. նա էր Բա-  
նանցեցի Ազիզանց Նախշունը։

Մէկ անգամ չամբարձմանը, երբ գիւղի աղ-  
ջկերքը սովորաբար գնացին Ֆլիանասորի առ-  
ուակի ափին վիճակ զցելու, Վարդանն ու  
Նախշունը միմեանց վիճակուեցին։ «Աստծու  
կամքն է այդ», — ասացին միւս աղջիկները,  
շնորհաւորելով, աչքալիսէք ասելով իրանց բալ-  
դաւոր ընկերուհուն։ Նախշունը շատ ամաչեց  
ու շատ կարմրեց. նա ինտրեց ընկերուհիներին  
ոչոքի ոչինչ չասել։ Նրանք խոստացան ոչ մի  
տեղ ձէն ու ծպտուն չը հանել, գիտէին, որ  
առանց այդ էլ խաբարը դուշի թեռլ հասնելու  
է Վարդանին։ Ազիզանց Նախշունը ամբողջ  
գիւղում մի հատ էր միայն. ի՞նչ ամբողջ գիւ-  
ղում, ամբողջ աշխաբհում նրա նմանը հազիւ  
դուցէ գտնուէր. նա մի շատ գեղեցիկ, մի սքան-  
չելի, մի անսման, մի հրաշալի, մի կեանք մա-

<sup>1)</sup> Ջատ գեղեցիկ կին։

շող, մի սիրոտ հալող, մի հողեհանիչ, էլ ի՞նչ  
ասեմ — մի կատարեալ ջանի կրակ, մի հրավու-  
րիչ, մի սիրուն-շարմաղ աղջիկ էր։ Է՛ էլ ի՞նչ  
ասել. արդէն ասուած է, որ ծաղիկներ շատ են  
բուսնում կանաչազարդ դաշտերում ու պարտէղ-  
ներում, բայց ոչ մինը նրանցից վարդի գեղեց-  
կութիւնը, հոտն ու քնքուշութիւնը չունի.  
ատտղեր շատ են փալում երկրանց երեսին, բայց  
ոչ մինի ըռեխը չէ իր փալով արեգակի հետ  
համեմատուիլ։ Ջարմաղ աղջիկներ շատ կալին  
դիւղերում, բայց ոչ մինը Նախշունին հասնել  
չէր կարող, նա բոլոր աղջկերանց մէջ տմենա-  
աղիղն ու ամենանախշունն էր, և կարծիս ինքը  
Նախախնամութիւնն էր նրա անունը զրել Ա-  
զիզանց Նախշուն։ Քահիլ-ջուլ տղէքը շատ  
էին ախ ու վախ անում Նախշունի ետևից,  
շատ էին իրանց գլուխները տափերին թակում,  
բայց բոլորը իզուր. նրանց հառաջանքները ար-  
ձագանք չէին գտնում Նախշունի սրտում...

### III.

Մի անգամ Վարդավառին Բանանցի ջահիլ-  
ները, տղայ ու աղջիկ, հարս ու հարսնացու՝  
մեծ բաղմութեամբ հաւաքուել էին Թիմադ-տե-

դը, <sup>1)</sup> ուր Մոնթունց մզրբտանձի <sup>2)</sup> տակին կլվում էր զաւալ Թիւնիի գուռնէն ու պարող-պարողի ետևից կանչում ասպարէզ: Աղջկերքը պարում էին, տղէքը շօբօշ <sup>3)</sup> էին տալիս նը-րանց. ուկին ու արծաթը կարկուտի պէս թափ-ում էր զաւալ Թիւնիի զլխին: Իւրաքանչիւ-րը շօբօշ էր տալիս իր սրտի ընտրածին. էլ տղայ չը կար, որ սրտումը մի դարդ չունենար ու այդ դարդին դարման չը փնտուէր Մոնթունց մզրբտանձի տակին... Տղէրանց մի ստուար իտումբ, քաշուած մի կողմ, մեծ ուշադրութեամբ լուռ ու մունջ դիտում էր պարողներին. նրանցից շօբօշ տուղներ չը կային. նրանց մէջ գր-տնւում էր այդ միջոցին ջիւան Վարդանը, որը Վարդափառի հանդէսը տեսնելու համար օրը կէսօրին ծածուկ իջել էր Ղաշխա-քար սարից Թիմաց-տեղը: Երբ Ղաւալ Թիւնին սկսեց ածել

<sup>1)</sup> Բանանցի գիմացին, Գուշզարա գետի աջ ափին գտնվում է; այդիների ու պարտէզների մի երկար շարք, որը յայտնի է՝ “Դիմաց-աեղ” անունով: <sup>2)</sup> Տանձենի, որի պառզները շատ քաղցր են, մեղրահամ են: <sup>3)</sup> ‘Ի պատիւ պարողի նրա ճանօթները, բարեկամներն ու ազգական-ները դաւալին քաջալերութեան համար փող են նուի-րում. այդ կոչում է շօբօշ (շաբաշ). Երբեմն փողը տալիս են պարողի ձեռքը, որը պարը վերջացնելուց յետով տալիս է զաւանին: Յթէ շօբօշը մի բուբուց բարձր է, այն ժամանակ զաւալը վերջնում է իր համար որոշ տո-կոս (բուբուց 5 կ.), իսկ մնացածը յետ է տալիս նրան, որը առել է շօբօշը:

ուզուն-դարէն <sup>1)</sup>), պարերի կարգադրիչ Գեօգալ աքիրը աղջկերանց խմբի միջից դուրս քաշեց պարելու Աղիզանց Նախշունին: Նա շատ նազ ու սազ <sup>2)</sup> արաւ, շատ դէս ու դէն քաշուեց, էս հարսի, էն հարսի թէկի տակ թագ կացաւ, բայց չը կարողացաւ Գեօգալ աքօր ճանկերից պլծնել. Երեսը կիսով չափ զանդրուկով <sup>3)</sup> ծած-կած՝ նա դնաց ու կանգնեց մի վայրկեանաչափ զաւալի առաջին ու սկսեց պարել ուզուն-դարի եղանակով: Ո՞նց էր պարում նա. այդ ոչ դրչով կարելի է գրել, ոչ լեզով պատմել. լորն ու կա-քաւն անդամ չեն կարող նրա պէս սուզրուուց <sup>4)</sup> տալ, նրա պէս լողալ օղի մէջ. նրա ոտի սկիթն անդամ կարծես գետնին չէր դիպչում. նրա թը-շերը նորաբաց վարդի պէս հրհրատում <sup>5)</sup> էին ու նայողին խելքահան անում: Տղէքն իրար ե-տեկց շօբօշներ էին տալիս նրան, բայց նա ո-չոքի ձեռքից չէր ընդունում շօբօշը <sup>6)</sup>). աչքե-րը գետնին դյած նա չէր նկատում կարծես,

<sup>1)</sup> Պարի յաւանի եղանակ է; <sup>2)</sup> Ճատ կոտրատուեց: <sup>3)</sup> Ծածկոց երեսի, քօզ: <sup>4)</sup> Սահել: <sup>5)</sup> Փալում: <sup>6)</sup> Եթէ պա-արող աղջկան մի բոլորովին անձանոթ, օտար տղան շօբօշ (շաբաշ) տալիս, —այդ նշանակում է, որ տղան նրան իր ձեռքն ու սիրտը, աղջին ընդունում է, կամ ոչ. նրան իր ձեռքն ու սիրտը, աղջին ընդունում է, կամ ոչ. շօբօշի ընդունելն օտար ազափ տղից փոխադարձ համա-կրութիւն է նշանակում. աղջիկը սուս ու փուս ընդու-նում է նրա առաջարկութիւնը, նրա հարսնացուն է դաս-պատմում: Սովորաբար այդ առաջուց մեծերի ձեռքով նախա-պատրաստած է լինում:

թէ նվէ է իրան շօրօշ մեկնում: Խեղճ տղէքը,  
ճար ու իլաջը կտրած, տանում էին շօրօշներն  
ու կպցնում դաւալի ճակատից, որը ողեւսուած  
դրանից, աւելի ու աւելի ուժգին էր փչում իր  
դուռնէն: Խոկ Նախշունը պարում էր ու պա-  
րում. նա կատարեալ կրակ էր կտրել և այրում  
ու դաղում չորս կողմի տղէրանց սրտերը: Յան-  
կարծ զաւալի առաջին կազմուած շրջանի մէջ  
երեւաց մի վիժխարի երխտասարդ, ոտից մին-  
չեւ զլուխ սպառաղինուած. նրա աչքերը կրակ  
էին ցայտում. յանդուզն ու համարձակ նա նա-  
յում էր իր չորս կողմը: Մի ընդհանուր «ահ»  
դուրս թռաւ այդ միջոցին բոլորի կրծքերից.  
մեծ ու պստիկ զարմացմամբ ու հիացմամբ նա-  
յում էին նրա վրայ. նա ջիւան Վարդանն էր,  
որի մասին առասպեկներ էին պտըտում ժողովր-  
դի մէջ և որն առաջին անդամն էր այդպէս  
հրապարակով լոյս աշխարհ դուրս գալիս: Մի  
վայրկեանաչափ Նախշունին դիտելուց յետով,  
նա հանեց ծոցի գրապանից մի ոսկի ու մեկնեց  
Նախշունին, որը դողդողչիւն ձեռքով ընդու-  
նեց նրա ձերքից շօրօշն ու շարունակեց իր  
պարը: Վարդանը դնաց իր տեղը. Նախշունը  
պարեց դաղստանին<sup>1)</sup>, նետեց զաւալի առաջը  
Վարդանի տուած շօրօշն ու դնաց, անհետա-

<sup>1)</sup> Կեզդինկաչ:

ցաւ աղջկերանց խմբի մէջ: Երբ արեգակը մայր  
մտաւ, տղէքը եալլի<sup>1)</sup> պարելով ուղեւորաւեցին  
դիւղը, աղջկերքն ու հարսները խումբ-խումբ  
զնացին նրանց ետևից, իսկ Վարդանը հստեց  
իր Քիւրան ձին ու դնաց Հին-Անապատի ձորը,  
ուր սպասում էին նրան իր ընկերները:

#### IV.

Մի անսովոր, մի տարօրինակ զող էր ըն-  
կել Վարդանի ջանը. նրա սրտում մի ինչ որ  
կրակ էր վառուել, որն արդէն ալրում, խորո-  
վում էր նրան: Նախշունի մասին նա շատ էր  
լսել, իայց երբէք նրան չէր տեսել. վերջապէս  
տեսաւ այն սքանչելի կորին ու տեսնելուն պէս  
զգաց իր սրտի խորքում մի բան, որը նա եր-  
բէք չէր զգացած առաջ: Էլ չը կարողացաւ  
համբերել, էլ չը կարողացաւ իր տեղում՝ տղե-  
րանց խմբի մէջ ծածուկ պահուել. նա, դաշա-  
ղը, դուրս եկաւ հրապաւակ, ժողովոցի մէջ, ու  
մեկնեց Նախշունին շօրօշը: Նախշունը կար-  
մրեց. նրա թշերն ու շրթունքներն ալաւալաւ<sup>2)</sup>  
արին, շողշողացին ճիշտ այնպէս, ինչպէս շող-

<sup>1)</sup> Եալլին պարում են միաժամանակ երեքից մինչեւ  
վեց հոգի կրաք ձեռքերից բռնած (կլոր պար): <sup>2)</sup> Վառ-  
փեցին:

շողում է Տէրւուտայ ձորի Կարմիր քարը, երբ  
փաղ առաւօտեան նրա ճակատը զարդարւում է  
արեգակի առաջին հրհրատող<sup>1)</sup> ճառագալթ-  
ներով, և նա, ջանի կրակը, դողդողչիւն ձեռ-  
քով, աչքերը գետնին դցած՝ ընդունեց Վար-  
դանի ձեռքից շօբօշը: Նրա մատները դիպան  
Վարդանի մատներին. կրակ կար, ինչ կար նը-  
րանց մէջ. գիւլլա-բարութ<sup>2)</sup> կար զուցէ նրա  
եղունդների տակ,—այդ ով կարող էր իմանալ.  
Վարդանը միայն այն զդաց, թէ լինչպէս նրա  
սիրտը գիւլլա-խորով<sup>3)</sup> եղաւ, ինչպէս նա այր-  
ուեց, խորովուեց, կարծես իրա պէս մի ջիւանի<sup>4)</sup>  
գնդակ ծակեց յանկարծակի իր սրտի գթալը<sup>5)</sup>:  
Բայց վաղուց արդէն յայտնի էր ամբողջ աշ-  
խարհին, որ զեռ ոչ մի տեղ չէր ծնուած այն  
լիդիթը<sup>6)</sup>, որը կաբողանար բացարձակ կռւում  
մարդ ու մարդանա գնդակ մեխել Վարդանի  
սրտում. նրա նանի պէս կին մի հատ է միայն  
եղի ամբողջ աշխարհում, ուստի մի Վարդան,  
մի անյաղթ ջիւան կար միայն աստղերանց տա-  
կին... Բա էդ ոնց եղաւ, որ մի ջահիլ աղջիկ,  
մի թոյլ էակ, նրա պէս ապդուն<sup>7)</sup> տղամար-  
դին գիւլլախորով արաւ, գերեց ու կաշկանդեց

<sup>1)</sup> Փայլուն: <sup>2)</sup> Գիւլլա-բարութ: <sup>3)</sup> Գնդակահար: <sup>4)</sup> Ջիւան-շատ քաշ, անզուսպ, անյաղ-  
թելքաչ: <sup>5)</sup> Սրտի խորքը: <sup>6)</sup> Քաջ, կտրիճ: <sup>7)</sup> Անողորմ քաջ:

անխորտակելի շղթաներով. ահը նա չունէր եա-  
րադ-ասպաք, սուր ու թուր, խանչալ ու հրա-  
ցան: ի՞նչ եմ ասում. քա նրա սկզբակ աչ-  
քերը, դալամ ունքերը, սև ու երկայն մազերը,  
չինարի բոյը, կաքաւի քալուածքը, հրհրատող  
թշերըն ու բարակ՝ վարդագոյն շրթունքները,  
նրա քնքոյշ մատները, նրա մեղմ ժպիտը, նրա  
հողի ու սիրտ հալեցնող հայեացքը անթիւ, ան-  
համար թուր ու թուանգի<sup>1)</sup> ոյժ ու զօրու-  
թիւն ունէին:

— Զէ, մտածեց Վարդանը. Կախշունին իր նա-  
նը ծնել է ինձ համար, և իմ նանը ինձ ծնել  
է նրա համար. Ինքն Աստուած է այդպէս կար-  
գաղբել, և թող կատարուի նրա կամքը. ես  
Կախշունին իմ ձեռքից չեմ թողնիլ երբէք.  
նա իմ բաղդը, իմ մուրազն է. առանց նրան  
ես այլ ես չեմ կարող ապրել այս վշու ու տա-  
տառկոտ աշխարհում. առանց նրա կեանքն  
ինձ համար անվերջ տանջանքի աղբիւր կը լի-  
նի միշտ:

Վարդանը գիտէր, որ նա մարդկանց մէջ  
խաղաղ ապրել չէր կարող. նա յայտնի զաքաղ<sup>2)</sup>  
էր, թոյլերին ու անօդնականներին պաշտովա-  
նող դաշաղ:

Կա ունէր բազմաթիւ թշնամիներ, որոնք

<sup>1)</sup> Հրացան: <sup>2)</sup> Փախստական:

Նրան միշտ վիճուռում էին. նրա ամեն մի մաղին նրանք մի-մի ոոկի կը տալին, եթէ գըտնուէր մէկը, որը կարողանար Վարդանին կենդանի կամ մեռած նրանց ճանկը զցել: — Ի՞նչ զործ ունեմ ես մարդկանց մէջ, — մտածում էր Վարդանը, — ես դինջ ու խաղաղ ապրել այլ և՛ չեմ կարող. թողնել լեռներն ու գնալ այնտեղ, բաց գաշտում փտել վատ անդուժի լծի տակ, ո՛հ, դրանից դաժան բան ես երեակայել երբէք չեմ կարող: Կը փախցնեմ ես իմ Նախշունին սարերը, այնտեղ աղատ բնութեան դրկում կ'ապրենք մենք երջանիկ, և երբ ես ուղամի դաշտերից վիրաւորուած ու արիւնաթաթախ կը վերադառնամ տուն, նրա մի ժպիտն անդամ բաւական կը լինի բուժելու իմ վէրքերը. նրա դրկում ես հանդիստ կաւնեմ ու միշտ կը սովասեմ, որ երբ կրկին հարայն ընկնի մէր ձորերը, ես արձակ-համարձակ կիջնեմ լեռներից գաշտ ու կը գնամ կոռուելու այնտեղ դաժան թշնամու դէմ, լաւ իմանալով, որ այնտեղից, անմատչելի լեռանց դադաթներից նայում է իմ ետևից իմ սիրուէին, իմ սրբութիւն սրբոցը, իմ պահապան հրեշտակը, իմ եղեմահրաշ դիցուէին, որը ուղղած հայեացքը դէպի հորիզոնի խորքեր՝ խրախուսում ու քաջակերում է ինձ այնտեղից....

Ի՞նչ էր Նախշունի դրութիւնը այդ ժամանակ: Նրա հանգստութիւնն էլ խանգարուեց. նրա սիրտն էլ կրակ կտրեց: Գլշերը նա հանգիստ քուն չունէր: Վարդանի պատկերը նրա աչքերի առաջից չէր հեռանում երբէք: Դողէր ընկնում նրա ջանը, երբ նա լսում էր Վարդանի անունը. սիրտն ուզում էր տրաքուի, դուրս թռչի կրծքից, երբ լսում էր Վարդանի որ և է նոր քաջաղործութեան մասին, և նա, քաջը, օր օրի վրայ մեծ հոչակ էր ստանում, նրա անունը դրբերում էր ամեն տեղ: Դէ Նախշունի պէս ջահիլ աղջկայ գողտրիկ սիրտը էլ ոնց կարող էր հանդիստ իր տեղը կենալ: Համբարձման օրը վիճակում Վարդանն իրան ընկատ, — մտածում էր Նախշունը, — Վարդավախին նա եկաւ Դիմաց-տեղն ու այնտեղ Մոնթունց մղբըտանձի տակին միայն իրան, Նախշունին շօրոշ տուաւ, ուրեմն այդ քանում Աստծու մատը խառն է. Նա ինքն է այդպէս կարգադրել ու նրանց երկուսին, Վարդանին ու Նախշունին իրար համար ստեղծել: Ո՛հ, սիրտ, արդեօք կը հանգստանաս զու, կը բուժուեն քո վէրքերը, կը լինի արդեօք դարման քո դարդին, կը մեղմանայ զոնէ մի փոքր քեզ լափող վիշտը, թէ ոչ. ով սրտի մուրազ, կը կատարուես զու արդեօք, կը հասնեմ ես քեզ, թէ բո-



լորովին բէյմուրազ<sup>1)</sup> կիշնեմ ես գերեզման։ Այդպիսի հարցեր յաճախ ծաղում էին նախշունի գլխում։ այն ժամանակ նա քաշում էր տան խուլ ու մութ պուճախն ու այնտեղ արտասուում……

## V.

Օր օրի վրա նախշունը մայխեան վարդի պէս բացւում ու հրհաստում էր։ Վարդանի ու նրա փոխադարձ սէրը գնալով աւելի էր վառւում ու մտերմանում։ Լեռներից Վարդանն ուղարկում էր նախշունին ծաղկի փնջեր։ նա ինքն էր քաղում ծաղիկներն ու ինքն էր հիւսում վրնչերը։ Գարնան սկզբներին նա ուղարկում էր հարսի մանիշակ, մայխին կուսանց վարդեր, իսկ ամառը՝ եղա-ծաղիկ, լեռանց ծաղիկների այդ թագն ու պսակը։ Փնջերը բերում էին նախշունին Վարդանի ընկերները։ Նրանք մըտնում էին զիւղը վաղ առաւոտեան կամ երեկոյեան ճրագափառոցին, ճիշտ այն ժամին, երբ նախշունը կուժն ուսին դրած, արծաթէ բըզենիքը<sup>2)</sup> կրծքից ու թևքերից կախած, զընդզընդալի գնում էր Կարմնջի աղբըից ջուր բերելու։ Երբ նախշունը դնում էր կուժը աղբիւ-

<sup>1)</sup> Մուրազին չը հասած։ <sup>2)</sup> Արծաթէ դբամներ։

ըի լուլակի տակին ու ինքը թեքում վրան, այն ժամանակ խորհրդաւոր փունջն ընկնում էր կամուրջի վրայից ուղղակի նրա կժի վրայ։ Նախշունն խոյն հասկանում էր, թէ ումնից է փունջը, վերցնում էր ու խնամքով դնում ծոցումը, ուղիղ սրտի թուշումը, ճիշտ այնտեղ, որտեղ ամենից պարզ է լսում սրտի բարձիսումը։ իսկ թէ չահիլ աղջկայ սիրտը ՞նց է բարձախում այն վարկեանին, երբ նա իրան սիրող տղից ծաղկի փունջ է ստանում, — այդ զըրչով զրել կամ լեղով պատմել անհնարին է։ այդ գիտեն միայն այն բաղդաւորները, որոնց վիճակուել է ականջը դնել ուղղակի սիրած կոյսի չքնաղ կրծքի վրայ ու լսել նրա սրտի բարձիսումը։ Վարդանը այդ բաղդաւորներից չէր։ Ամեն անդամ նա յուղուած լսում էր ընկերոջ պատմութիւնը՝ թէ ինչպէս նա փունջը նրան նետեց կամրջի բարձրութիւնից։ ինչպէս նախշունը վերցրեց, հոտ քաշեց փնջից, համբուրեց ու ձախ ծոցումը դրեց ու յետոյ կուժն ուսեց և ուրախ, զուարթ գնաց տուն։ Երբ ընկերը վերջացնում էր իր պատմութիւնը, Վարդանը իր կրծքին խփելով, հայեացքը դէպի վեր ուղղած բացականչում էր խրոխտ ձախով՝ «ախ, մուրազ, մուրազ, եարաբ<sup>1)</sup> երբ կը հասնեմ ես քեզ։»

<sup>1)</sup> Արդեօք։

Վարդանի և Նախշունի մասին երգեր շարագրեցին գիւղի աղջիկները, նրանց վրայ հաղ<sup>1)</sup> կապեցին: Այդ երգերը գնալով տարածում էին ու բերանից բերան անցնում: Աշուղները շըրջելով գիւղից գիւղ՝ երգում ու փառաբանում էին Վարդանի ու Նախշունի փոխադարձ սէրը: Ոչոք դէպի նրանց չար նախանձ չէր զգում, քանի որ բոլորն էլ դանում էին, որ նրանք երկուսն էլ անպայման արժանի են միմեանց:

## VI.

Նախշունի գեղեցկութեան հուշակը գնաց, տարածուեց հեռու, շատ հեռու: Նրա լսաբարը գնաց—հասաւ Գանձակի լսանին: Վայն<sup>2)</sup> եկել էր ու խեղճ Նախշունին տարել, բայց նա ոչ մի քանից տեղեակ չէր. ոչ թէ միայն նա, այլ նրա ծնողներն ու Վարդանն էլ չէին երեւակայում, ու մի օր խանը կըսի, թէ ինչ հիւրի-փեարի է Ավլիզանց Նախշունը ու մարդ կուզարկի նրան փախցնելու: Անօրէն խանը հաւաքեց մի քանի իղիթ մարդիկ, մեծ սկարդեներ խոստացաւ նրանց և ուղարկեց Բանանց, Նախշունին փախցնելու: Խանի մարդիկը եկան ու պահուեցին գիւղից մօտիկ—չուռի ձորի ստուէ-

<sup>1)</sup> Երգ: <sup>2)</sup> Թժբաղդութիւն:

րախիտ անտառներում, որտեղից կարողանում էին մին-մին գալ գիւղն ու հետամուտ լինել Նախշունին: Կրանք իմացան այդպիսով՝ թէ երբէ նա գնում ջուրը, պարտէղը կամ այգին. երբ է լինում տանը մենակ, երբ է կթում նա դրսում իրանց կովերին ու այծերին: Մի օր վաղ առաւտեան, տաւարը հանդը քշելուց առաջ, երբ Նախշունը կուժը ուսին գնում էր Կարմնջի աղբւրից ջուր բերելու, ուղիղ կամորջի մէջ տեղում նրա վրա յարձակուեցին վեց ձիաւոր թուրքել, որոնցից մինը ուղղակի չանթեց նրան դետնից, դրեց իր ձիու վրայ ու առաջ արշաւեց. միւսները թափանչաներն ու որերը ձեռներին պատրաստ հետևեցին նրան: «Վայ նանէ,—բացականչեց դժբաղդ Նախշունը,—ինձ տարան. ուր ես դու, ուր, իմ ջիւան Վարդան:» Նա էլ չը կարողացաւ խօսել. աւազակի կոպիտ մատները գիպան նրա բերանին ու մեղմեցին. նա արտասում էր, բայց անգութ անօրէնը ուշ չէր զարձնում նրա արտասուքին: Իրարանցումն խկոյն ընկաւ դիւղը. հարայ-հրոցն ականջ էր խլացնում: Զահիլ-ջիւան տղէք շատ զնացին Նախշունի ետևից, բայց ոչ մինը կենդանի չը վերադարձաւ: Վեց ձիաւորներին ճանապարհին միացել էին ձիաւորների ուրիշ խըմքեր, ուստի գիւղացի տղէքը թէկ կուեցին ու

մեռան հերոսաբար, բայց ոչ մինը նրանցից չը կարողացաւ ազատել նազելի Նախշունին, որի արցունքը քարերն անդամ կարող էր ճաքեցնել միջից:

Հարայն հասաւ Վարդանին: Մուշնչաց նա առիւծի պէս, թափահարեց գլուխը, ձի նստեց ու կայծակի արագութեամբ դուրս թռաւ Տէրւուտայ ձորից, ձայն տալով իր ընկերներին. «տղէք, գնանք, հասնենք խանի մարդկանց ետևից. եթէ Նախշունը իմ ձեռքիցը գնայ, ես այլ ևս կենդանի չեմ վերադառնալ այս ձորերը. այդ լաւ իմացէք:» Տղէքը աքացեցին ձիաներին ու կրակ կտրած թռան իրանց առաջնորդի ետևից:

Սար ու ձոր դղրդում ու թնդում էր նրանց ձիաների ոտների շրջկրոցից: Մկեց աղբըում Վարդանը հասաւ թշնամու ետևից ու կռուի բռնուեց նրա հետ. սկսուեց կռիւ, սոսկալի, արինահեղ կռիւ: Թշնամին մեծ ջարդ կրեց, դիակներով ծածկեց ճանապարհը: Մկեց աղբիւրի սուրբ ջուրը ներկուեց նրա պիղծ արիւնով. միայն երկու հոգի ազատուեցին թշնամու իրմբից: Նրանք թողեցին ամեն բան, թողեցին Նախշունին ու փախսան քաղաք՝ խաբարը խանին տաներու համար: Ազատուած Նախշունը ընկաւ Վարդանի գիրկը: «Ո՛հ, իմ անսման

Նախշուն», «ո՛հ, իմ ջիւան Վարդան», —դուրս թռան նրանց շրթունքներից: Մի վայրկեանաշախակի նրանք իրար նայեցին, իրար կարօտն առան, յետոյ նրանց շրթունքները մեքենայաբար իրար կպան, և այդպիսով նրանք առաջին անդամ միմեանց շրթունքներից համբուր քաղեցին, մի շատ խորհրդաւոր համբուր, սկրոյ առաջին համբուր...

Նախշունի ծնողները եկան, հասան նրա ետևից Մկեց աղբըում ու տեսան նրան ազատուած: Նրանք ընկան Վարդանի ոտները և ուղում էին համբուրել, բայց նա թոյլ չի տուեց այդ, բարձրացրեց նրանց, ասելով: «Այսուհետեւ ինձ ձեզ որդի համարեցէք. առանց Նախշունին ես չեմ կարող ապրել. պսակեցէք ինձ սրա հետ և թողէք ես սրան տանեմ սարերը, ուր այս թուրը կը մինի միշտ նրա պաշտպանը. անօրէն խանը իր ամբողջ զօրքով անդամ չի կարող մերձենալ մեր անմատչելի լեռնալին ամբոցին:» Նախշունի ծնողները մաձայնուեցին: «Ոտով գլխով սա քունն է, որդի, — ասացին նրանք Վարդանին, — միայն դու կարող ես սրան պահպանել ու ազատել անօրէն բռնակալից. բայց սպասիր մի քիչ, թող մեր հայոց սուրբ օրէնքի համաձայն պսակենք ձեզ. այժմ մեծ պաս է, սպասեցէք Համբարձումն անցնի, և պսա-

կի ժամանակը գալ. Հարամ պտուղը մարդ չէ կարող մարսել, նոյնպէս և հարամ ամուսնութիւնը չի կարող վակելել մինչեւ վերջն ու երջանիկ մնալ միշտ:» — «Թողէք այդպէս լինի, — պատասխանեց Վարդանը, — տալիս եմ ձեղ իմ Նախշունին, իրեւ ամանաթ. լաւ պահպանեցէք սրան, մէնակ այլ ևս ջուրը չ'ողարկէք, իսկ ես իմ դարանից այսուհետև աւելի մեծ ուշադրութեամբ կը հօկեմ ճանապարհների վրայ ու թող չեմ անիլ, որ թշնամու շողքն անզամ երեալ մեր ձորերում:»

Ֆնողները Նախշունին տարան տուն, իսկ Վարդանը գնաց, բարձրացաւ իր անառիկ լեռները:

## VII.

Երբ իր մարդկանց ջարդի լուրը հասաւ խանին, սաստիկ կատաղեց նա. երկու փախստական ձիաւորներին հրամացեց իսկոյն և եթ դրւխատել, որ նրանք համարձակուել էին առանց Նախշունին դալ իր աչքերի առաջը: «Նամարդներ, — զոռաց խանը, — ամօթ չի ձեղ համար, որ դուք մի հայի առաջին փախստ էք տալիս. Հարամ լինի ձեր կերածը. Հայն լինչ է, որ դուք նրա առաջին փախչում էք:»

Կատաղած խանը հրամայեց մեծ զօրք ուղարկել Պուշղարի հովիտը, գտնել Վարդանին, ու տեղն ու տեղը կտոր-կտոր անել նրան, եթէ չը յաջողուի բռնել ու կենդանի բերել: Խանի զօրքը մտաւ Պուշղարի հովիտը, տակն ու վրայ արաւ բոլոր գիւղերը, պղծեց վանքերն ու սրբավալքերը: Աղիղանց տունը Բանանցում թէ քանդեցին, քարուքանդ արին, բայց Նախշունին չը դտան. ծնողները նրան մի ապահով տեղ առ աջուց թագցրել էին. Վարդանն իր քաջերով իջաւ Տանձուտի լեռներից ու կռւի բռնրուեց թւով անհամեմատ զօրեղ թշնամու հետ: Կռիւը պատահեց Տեմբլայ ձորում, որը խառնում է Պուշղարի հովիտի հետ Խաչակապի կամրջի մօտ: Թշնամու արիւնը զետի պէս հոսում էր: Վարդանն իր քաջերով կողք կողքի տուած առաջ էր շարժում ու ջարդում թշնամուն. աջ ու ձախ նա բրդում էր. նրա չորս կողմում անօրէնների դիակներ էին փուռած: Բայց յանկարծ անօրէնի մինը մահացու հարուած տուեց Վարդանին: Զը նայած վէրքին, նա անապատի անզուսպ առիւծի պէս առաջ էր շարժում. նրա թուրը չը տեսնուած ու չը լսուած հրաշքներ էր զործում: Զգալավ, որ մօտեցել է իր վերջին րոպէն, նա ձայն տուեց ընկերներին. — «տղէք, հասաւ արդէն ճակատագրական բոպէն,

ես մեռնում եմ, էլ ազատուել չեմ կարող, թողէք ինձ, հեռացէք, փախէք մեր սարերը, դուք զեռ շատ պէտք կը գաք մեր ժողովրդին. պատրաստ եղէք միշտ պաշտպանել նրա օջաղն անօրէններից»։ Տղէքը, սովոր լինելով միշտ կատարել իրանց առաջնորդի հրամանը, յետ նահանջեցին Տանձուտի լեռները։ Վարդանն արիւնաքամ էր եղել արդէն. այլ ևս չը կար նրա մէջ ոյժ շարունակելու անհաւասար կոխւը. ուրբերի հարուածները նրա վրա անխնայ թափում էին։ Նրա ոտները թուլացան. նա ընկաւ, բայց մինչև վերջին շունչը կուեց իր թշնամիների հետ. ընկած ձախ կողքի վրայ, ձեռքը սրտին սեղմած, աջ ձեռքով նա շարունակում էր շարժել սուրբ, բայց ոչ նախկին ոյժով ու եռանդով։ «Նամարդներ,—բացականչեց Վարդանը,—ընկածին քաջը չէ հարուածում. նամարդութիւն<sup>1)</sup> է ձեր արածը...»

Նա էլ չը կարողացաւ շարունակել. սուրն ընկաւ ձեռքից։ «Նախշուն, իմ Նախշուն, բէյմուրազ մնացի...»—ձախն տուեց նա։ Մահուան տագնապի մէջ մի անգամ էլ թոյլ, շատ թոյլ մրմնջացին նրա շրթունքները «Նախշուն» նուիրական անունը, և նրա հետ միասին նա կարծես դուրս փչեց իր կրծքից իր բոլոր իղձե-

<sup>1)</sup> Անազնութիւն։

ըը, իր սրտի մուրազը, իր կեանքն, իր հողին, իր ամբողջ էութիւնը. նա մեռաւ քաջի ու հերոսի մահով...

Երբ մութը ծածկեց երկիրը, Վարդանի ընկերները իջան լեռներից, իրանց սրերով գերեզման փորեցին քաջի ընկած տեղը, փոքրիկ ժայռի տակին ու ամփոփեցին այստեղ թանկագին ընկերօջ մարմինը։ Նրանք խաչ չը տընկեցին վրան, որպէսզի անօրէնը չը գտնի նրա գերեզմանը։ Վառուած վրէժխնդրութեան կրակով Վարդանի ընկերները կրակ էին թափում միշտ թշնամու դլխին, որն էլ առաջուան պէս չէր համարձակում պղճել մեր երկիրը։ Անբաւականների թիւը գնալով բազմանում էր։ Վարդանի ընկերներին միանում էին նոր ու նոր քաջեր, որոնք ամենայն սրբութեամբ կատարում էին նրա վերջին պատուէրը. այսոեղայնտեղ դարան մտած հարկը պահանջած դէսկըում պաշտպանում էին նրանք անտէր, անօգնական ժողովրդի օջաղն անօրէնների սրբապղծութիւններից ու աւերմունքներից։ Վարդանը թէև չը կար, բայց նրա անունը առաջուան պէս սարսափ էր տարածում խանի մարդկանց վրայ, քանի որ նրա հրոսակախմբերն անողորմ էին վրիժառութեան մէջ։ Վարդանի մահը շատ և շատ թանգ նստեց Գանձակի խանին։

## VIII.

Երբ Վարդանի եղերական մահուան լուրը տարածուեց գիւղերում, սուզ ու շիւանն ընկաւ ամեն տեղ. մեծ ու պստիկ, մայր ու մանուկ ողբում էին նրա կորուստը. քարերը կարծես նոյնպէս արտասում էին, այնքան մեծ էր ընդհանուր վիշտը: Երբ խանի գօրքերը բոլորովին քաղուեցին, կորան, Աղեղանց Նախշունը մի օր յանկարծակի անհետացաւ գիւղից: Գնողները շատ փնտուեցին նրան, շատ դէս ու դէն ընկան, վերջապէս գտան նրան Տեմբլայ ձորում նահատակ Վարդանի գերեզմանի վրա յորդառատ արցունք թափելիս: Աւագ չորեքշաբթի օրն էր այդ: Բնութիւնը կենդանում ու ծաղկում էր նրա չորս կողմում. լերներում դեռ նոր էին հալում ձիւները. Կարկաչահոս առուակները արդէն սկսել էին իրանց խորհրդաւոր մեղեղին. թռչունները ծլվում էին կանաչ մարգերում ու ծաղկազարդ ծառերի վրայ. նրանք մերթ թաւալում էին մանուշակի թփերի մէջ, մերթ դէս ու դէն թռչլուսում. խոկ նա, անմեղ կոյսը, նաղելի Նախշունը, բնութեան այդ սքանչելի արարածն ու դարդը, չոքած չոր ժայռի տակին, մորմոքիչ ձայնով ողբում էր իր շիւան Վարդանի անդառնալի կորուստը... Ի՞նչ տիսուր

պատկեր էր ներկայացնում այդ բոպէին Տեմբլայ ձորի այդ վոքքիկ անկիւնը, այդ արիւնաներկ սրբավայրը. գեղածիծաղ, միշտ և յաւիտեան անհոդ, ծաղկափթիթ բնութիւն. չորս կողմում, խոկ այնտեղ, ժայռի տակին՝ մխկուցող, վշտահար, անմխիթար մի էակ, որը թէւ շատ ու շատ ծաղկեներից գեղեցիկ էր, բայց ափսոս, նրանց չափ երջանիկ չէր... Նախշունն զգում էր, որ աւելի շուտ է անհետանալու բնութեան դրկից, քան չորս կողմի ծաղկեները, որոնց նա երանի էր տալիս, թէւ գիտէր, որ նրանց հասակն էլ շատ կարճ է....

Ֆնողները հեկեկացող Նախշունին տարան տուն: Ամբողջ ճանապարհը ողողեց նա արտասուքի կաթիւներով, որոնք անընդհատ զլորւում էին նրա աչքերից ցած, և ընկնելով գետնին, այրում, խորովում էին նրան. շատ էր դառը նրա արցունքը: Նախշունն էլ երկար չապեց. օր օրի վրայ նա մաշտում ու հալում էր. սրտի կափիծը լափում էր նրա թոյլ կազմուածքը. հեշտ բան էր, ինչ է՝ Վարդանի պէս դիւցաղնից զրկուիլը: Նախշունը նրան այս վշտի ու տառապանքի աշխարհումը էլ չէր տեսնելու. նրա Վարդանը գնաց յափտենականութեան գիրկը, որտեղից չը կայ վերագարձ երբէք. այնտեղ, այն հեռու ու անյայտ աշխարհում միայն պիւ-

տի փնտուել նրան, գուցէ այնտեղ է վիճակուած նրանց իրանց սրտերի իդձերն իրագործուած տեսնել. այս աշխարհում նրանց վիճակուած էր միայն վիշտ ու տառապանք, ցաւ ու կսկիծ, ողբ ու դառն արցունք: Սիրոյ առաջին համբոյը Մկեց աղբիւրի մօտ մի երազ, մի պատահական երազ էր, որը մի վարկեան հազիւ տևեց, գընաց ու կորաւ ժամանակի անսահման անդունդի խորքերում. այն հրաշալի վարկեանը, երջանկութեան այն մօմննուր գնաց, և չկայ նըրան վերադարձ յաւիտեան.... Նախշունը մեռաւ սրտի անդարման դարդից, նրա անբուժելի վշտերից: Նա իջաւ գերեզման բէյմուրազ, եր սրտի իդձերը, իր մուրազն իր հետ միասին եր ծաղիկ կեանքում նա մութ ու մուալ գերեզմանը տարաւ...»

## IX.

Նախշունի արցունքից աղբիւր գոյացաւ Նահատակի գերեզմանի խորքում. այսօր էլ նա հոսում է ժայռի տակից, նա մըմնջում է միշտ մի շատ տիսուր մեղեդի: Նախում ես Նահատակի աղբիւրին, և քեզ թւում է, թէ դու այլուեղ բէյմուրազ Նախշունի ողբն ես լսում. կարծես նա դեռ կենդանի քո առաջին կանդնած՝ իւր

եղեմակրաշ դիւցաղնի անդառնալի կորուստն է ողբում. կարծես լսում ես նրա մորմոքիչ ձայնը, նրա հեկեկանքը, և դու մի վայրկեանաչափ մոռանում ես քեզ, զգում ես նրա սրտի կսկիծը, նրա դառն ու անբուժելի վշտերը, նրա անմխիթար յուսահատութիւնը, նրա ճակատագրական դժբաղբութեան ծանրութիւնը...

Ժայռը, որի տակ գտնուում է Նահատակի գերեզմանը, սկացած է մոմերից: Նա մի նուիրական սրբավայր է: Ժողովուրդն ինքը Վարդանին սրբերի կարգը գասեց ու նրա նահատակութեան տեղը դարձրեց ուխտատեղի, ուր երկրպագելու են գընում միշտ աւագ չորեքշաբթի օրը, երբ ծնողները գտան այնտեղ Նախշունին արցունք թափելիս՝ իր դիւցաղնի գերեզմանի վրայ: Երկրպագելու են գնում առհասարակ ջահիլները, գլխաւորապէս նրանք, որոնք գեռ չեն հասել իրանց մուրազին այս անցաւոր աշխարհում... Նահատակի ժայռի գլխին բուսած է մի հացի ծառ, որն իր ճղքերը տարածած սրբավայրի վրայ, կարծես գորովագութ մօր նման պահպանելիս լինի նրան ամենայն չարից ու պատուհասից: Ժայռի տակից հոսող աղբիւրը պարզ է ու մաքուր, ինչպէս այն հերոսի սիրուր, որն ամփոփուած է գերեզմանի խորքում: Ժայռին կլց հոսում է առուակը. Նա էլ աղբիւրի պէս մըմըն-

յում է մի հոգեմաշ մեղեդի, որը երևակայում թեան թևերի վրայ տանում է քեզ հեռու, շատ հեռու դէպի այս մուայլ ու ողբալի անցեալը, երբ մեր երկիրն էլ ներկում էր անմեղ զոհերի արեան վտակներով։ Առուակի ափին կանդնած է ողբացող ուռենին. նրա ճղները ցած են կախուած. նրա գլուխը թեքուած է նոյնպէս ցած, կարծես նա էլ բէյմուրազ Նախշունի պէս արցունք լինի թափելիս Նահատակի զերեզմանի վրայ։ Փչում է զեփիւռը. հացիի ու ուռենիի ճղները մեղմ շարժում են. լսում ես նրանց մրմունջը, ու քեզ թուում է, թէ մէկը նրանցից անյատ քաջի, Նահատակ Վարդանի դժբաղդ մալրն է ժայռի վրայ տարածուած, միւսը բէյմուրազ Նախշունն է նրա զերեզմանի վրայ թեքուած. կարծես միմեանց վշտերը, ցաւերն ու կոկիծը լինեն նրանք իրար յայտնելիս. կարծես նրանք ջանում են մխիթարել իրար, հովացնել գոնէ մի փոքր իրանց մխկտացող սրտերը, բայց աւաղ, նրանք չեն մխիթարում. նրանց հոգեմաշ տանջանքներին, նրանց անբուժելի վշտերին չը կայ վերջ յաւիտեան....

Տարին մի անգամ, աւագ չորեքշաբթի գիշերը՝ տօնից առաջ, Նահատակի ժայռի տակից, զերեզմանի խորքից՝ լսում է Վարդանի ձայնը. նա գանգատում է իր անտանե-

լի վիճակից ու աղիողորմ ձայնով կանչում է իր Նախշունին։ Ողբացող ուռենին նոյնպէս լեզու է ստանում ու խօսում է. այդ խօսում է Նախշունը։ Վարդանի մայրը՝ հացի ծառն էլ լեզու է ստանում ու խօսում։ Վարդանն ու Նախշունը իրար վշտերը, իրար սրտի ցաւերն են յայոնում միմեանց, իսկ դժբաղդ մայրը ջանում է նրանց մխիթարել հանդերձեալ աշխարհի յաւիտենական երջանկութեան յոյսով. բայց իդուր. դարեր ու տարիներ մինչև օրս վերջ չեն դրել նրանց ցաւերին, քանի որ նրանք իջել են գերեզման բէյմուրազ, և իւրաքանչիւր տարի «չիք» գիշերը Նահատակի սրբավայրում լսում են նոյն գանգատները, նոյն հառաջանքներն ու նոյն ողբը...»

Վարդանն ասում է.

— Ո՛հ, մուժ է այստեղ.

Խաւար է դաժան,

Անդունդ է ահեղ,

Անդունդ անսահման...

Մինչև երբ այստեղ

Ես պիտի տանջուեմ,

Այս ահեղ խորքում

Տառապանք կրեմ...

Մինչև երբ արդեօք

Սրտիս բաբախումն

Պիտի պատճառէ միւս ու ուժանելի մի  
 Իսկ անվերջ տանջանք...  
 Ո՛չ, ես չեմ տեսնում ու ետքառ  
 Ե որևէ Կապուտակ երկինք. որ  
 զի աշխատ Արեգակ, լուսին, ու ուժանու  
 համար Աստղեր անհամար՝ ոյցնոցի զայն  
 բայց Ինձ համար երբէք,  
 ու ամայի Երբէք չեն փայլում... միւս նկան  
 ուր զայը Սիզաւէտ լեռներ,  
 մեր մէջ Թաղլաւէտ դաշտեր,  
 մէր մէ Չորեք, հովհաններ  
 Մշուշով ծածկուած.  
 մնու մէ Եեղնից ալդքան, շուտ  
 մնու առ Գրկուել, բաժանուել,  
 Միթէ ինձ միայն  
 Այդ էր վիճակուած: մնարքութ  
 Թողի տուն ու տեղ,  
 Մալր, քոլր ու եղբայր.  
 Փախայ ես լեռներ, ու որով  
 Անառիկ լեռներ, ու որով  
 Ուր ազատ ապրել,  
 Ազատ օդ շնչել ժայռ ով  
 Զգում էի միշտ բժնա ով  
 Իմ բոլոր ոյժով... մասսանց  
 Իջայ ես մի օր մասսանց  
 Վեթխարի սարից, ովովով

Գնացի այնտեղ,  
 Ուր հարս ու աղջիկ  
 Կանաչ պարտէզում  
 Պար էին պարում  
 Չեռք ձեռքի տուած:  
 Ջահիլ ու ջիւան  
 Տղէրանց առաջ:  
 Երջանիկ օրեր  
 Ես չէի տեսած.  
 Սիրուհուն կրծքիս  
 Ես չէի սեղմած.  
 Այնտեղ ծառի տակ  
 Առաջին անգամ  
 Նոր կեանք զգացի, առ ով  
 Նոր հոգի առայ... մասսանց  
 Նախուն, իմ Նախշուն,  
 Ես քեզի տեսակ...  
 Թշնամին անգուժ  
 Քեզ ինձնից զրկեց,  
 Ինձ քեզնից խլեց  
 Ու այս անդունդի  
 Խորքերը նետեց...  
 Ո՛չ, մեծ են սրտիս  
 Վեշտն ու տառապանք.  
 Ճատ դաժան են նրանք  
 Ու շատ անողոք.

Նախշուն, իմ Նախշուն,  
Ուր ես դու արդեօք:  
Գոնէ մի կաթիլ  
Արցունք քո աչքից  
Եթէ վայր ընկնէր  
Գերեղմանիս վրայ,  
Ես այսքան սաստիկ  
Էլ չէի տանջուիլ,  
Գոնէ մի ըռպէ  
Հանգիստ կը զգայի...

Արի, Նազելի,  
Արի, աննման.  
Միշտ ու յաւիտեան  
Այս ժայռի տակին  
Տարիներ երկար  
Ու դարեր անհուն  
Ես քեզ եմ սպասում,  
Իմ աղիզ Նախշուն...

Խօսում է Նախշունը:

— Ակսած այն օրից,  
Երբ չար թշնամին  
Դրեց այստեղ վերջ  
Քո ծաղիկ կեանքին,  
Կանգնած այս ձորում  
Առուակի ափին,  
Միշտ քեզ եմ սղբում

Իմ ջիւան դիւցաղն,  
Իմ քաջն Վարդան:  
Արցունք յորդառատ,  
Արցունք դառն շատ  
Գերեղմանիդ վրայ  
Ես թափում եմ միշտ.  
Բայց մի բոպէ,  
Գոնէ մի վայրկեան,  
Կոկիծն ու ցաւերն  
Իմ սրտի խորքում  
Դադար չեն առնում,  
Չեն էլ մեղմանում...

Ո՛չ, մինչև երբ այսպէս  
Քեզ պիտի ողբամ.  
Մինչև երբ այսպէս  
Առուակի ափին  
Պիտի սպասեմ  
Քո վերադարձին...

Կը գայ այդ օրը,  
Կը տեսնեմ ես քեզ.  
Թէ այստեղ կանգնած  
Միշտ ու յաւիտեան  
Պիտի ողբամ քեզ,  
Իմ ջիւան Վարդան:  
Խօսում է Վարդանի մալլը.  
— Իմ աղիզ բալալ,

Իմ ջիւան Վարդան,  
 Իմ զաւակ սիրուն,  
 Իմ որդի անյաղի,  
 Եւ դու դուտը իմ,  
 Նազելի Նախշուն.  
 Իմ սրտի ցաւերն  
 Նոյնակս դառն են շատ.  
 Կոկիծն ու տանջանքն  
 Ինձ մաշում են միշտ:  
 Զը կայ մեր վշտին  
 Ոչ մի կարեկից,  
 Զը կայ մեր ցաւին  
 Այտեղ մի դարման...  
 Բայց այնտեղ հեռու  
 Կապուտ երկնքում  
 Կայ Աստուած հօր,  
 Աստուած մեծազօր:  
 Նա տեսնում է մեզ.  
 Մեր հառաչանքները,  
 Լացն ու կոճը մեր,  
 Յուսով եմ վաղ-ուշ  
 Նրան կը հասնեն:  
 Նա մեզ չի թողնիլ  
 Յաւիտեան տանջուել,  
 Արիւն-արցունքով  
 Գետինը ներկել.

Կը համնի ժամը,  
 Կը բացուի ատեան,  
 Եւ նա կը կանչի  
 Իր շուրջը մարդկանց. —  
 Կը սկսի քննել,  
 Կը սկսի կշուել  
 Նրանց մեղքերն ու վանդ  
 Անժիւ, անհամար:  
 Չար մարդն այնտեղ զայն անց  
 Պատիժ կը ստանայ,  
 Բարին, արդարը  
 Փրախտ կը դնայ,  
 Ուր կայ միայն սէր,  
 Մէր ու միութիւն,  
 Մէր վառ ու անհուն  
 Ու յաւիտենական...  
 Դուք էլ, զաւակունք,  
 Կը գնաք այնտեղ,  
 Իրար կը տեսնէք,  
 Իրար կը սիրէք.  
 Երջանիկ կը լինէք  
 Միշտ ու յաւիտեան,  
 Զէք զգալ ոչ վիշտ,  
 Ոչ ցաւ, ոչ տանջանք.  
 Զէք լսիլ այնտեղ  
 Ողբը թշուառի,

Չէք տեսնիլ երբէք  
 Նրա լացն ու կոծ,  
 Նրա տառապանք,  
 Նրա չարչարանք.  
 Դրախտում ըոլորն էլ  
 Են միշտ երջանիկ,  
 Փանի որ այնտեղ  
 Չը կան չար մարդիկ...

Արևելքում արդէն փայլում է արշալուսը. օրը  
 բացում է: Սրբավայրում տիրում է կրկին խոր-  
 հրդաւոր լուսիւնը. լսում է միայն առուա-  
 կի խոխոջխոն ու երբեմն, երբ փշում է մեղմ  
 զեփիւուր, հացիի ու ուռենիի ճղների հոգեմաշ  
 մրմունջը...

## X.

Մեծ պասի առաջին օրերից սկսած՝ գիւղի  
 հարսներն ու աղջկերքը սկսում են նահատակի  
 տօնի համար պատրաստուիլ. կանաչ-կարմիր շո-  
 րեր են կարում, սիրուն-շարմաղ<sup>1)</sup> կուլտան-  
 ներ<sup>2)</sup> են նախշում, զառ ու զառքաբով,<sup>3)</sup> ոս-  
 կի-արծաթով ծաղկանկար արխալուզները, լէ-  
 հիններն<sup>4)</sup> ու շիլա-շապիկները<sup>5)</sup> զարդարում,

<sup>1)</sup> Ջարմաղ-շատ սիրուն: <sup>2)</sup> Գլխի զարդարանք: <sup>3)</sup> Ոսկե-  
 ղէն: <sup>4)</sup> Երջազգեստները: <sup>5)</sup> Կարմիր շապիկները:

որ նահատակի օրը կանաչ քօշերը<sup>1)</sup> հագած,  
 արբեշումի — հրեաթի աղլուխներն ու չարդաթ-  
 ները<sup>2)</sup> գլխներին ծածկած, արծաթի ըրզենեքը  
 կրծքներից կախած՝ դնան նահատակի նուիրա-  
 կան զերեզմանին երկրպագելու, նրան իրանց  
 դարդերը յայտնելու, նրանից իրանց սրտերի  
 մուրազի իրազործումն խնդրելու: Մեծ ու դո-  
 րաւոր ուխուատեղի է նահատակի զերեզմանը.  
 մուրազեթրան<sup>3)</sup> է նա, բաւական է, որ հեզ,  
 հանդարտ ու մաքուր սրտով մոտենաս նրան,  
 համբուրես, մոմ վառես, և նա խնդրելքդ ան-  
 կատար չի թողնիլ. վաղ-ուշ քեզ քո մուրազին  
 կը հասցնի: Զուր տեղը չեն նրա վրայ այնքան  
 յոյսեր դնում. այլուած ու խորովուած սրտերի  
 մխիթարողը, յուսատու աստղն է նա: Եթէ նա  
 չը լինի, էլ ում կարող ես յայտնել սրտիդ դար-  
 դերը, ով կը լինի քո յոյսը. բաւական է, որ  
 վերջինը լինի քո մէջ, և դու կարող ես հէնց  
 նրանով միայն հարիւր տարուց աւել ապրել աշ-  
 խարհիս երեսին: Եթէ դու հաւատում ես նահ-  
 ատակին, նա քեզ յոյս կը տալ միշտ. դու  
 այն ժամանակ կը հաւատաս քո ապագալին,  
 իսկ առանց յոյսի սիրտդ պատսու-պատառ կը  
 լինի, և դու ամենանաշար<sup>4)</sup> մարդը կը լինես

<sup>1)</sup> Կօշիկները: <sup>2)</sup> Գլխի ծածկոց: <sup>3)</sup> Մուրազին հասց-  
 նող: <sup>4)</sup> Ամենախնեղն:

աշխարհիս երեսին. այն ժամանակ մահուան  
մէջ կը փնտռես քո փրկութիւնը, և ով է լիմա-  
նում, սատանան միշտ մարդուս քամակին կան-  
գնած է, կը գնաս ու կը նետուես կամբջից  
ցած գետի յատակում հանգիստ գտնելու հա-  
մար...»

Զրի ճանապարհին պատահում են միմեանց  
երկու նազելի աղջիկներ՝ Վարդին ու Ճուղին:  
Նրանցից Վարդին տխուր է, շատ տխուր. Ճու-  
ղին ուրախ է ու գուարժ: Այդ տեսնելով՝ Վար-  
դին աւելի է տխրում. արտասուքի կամքինե-  
րը երբեմն դուրս են ցայտում նրա սկզբակ աչ-  
քերից ու վարդագոյն թշերի վրայով զլորւում են  
ցած. նրա հայեացքն ուղղուած է ցած. պարզ նը-  
կատելի է, որ նրա սիրտը հալ ու մաշ է լի-  
նում մի ինչ որ դարդից, որը կրակ դարձած  
այրում ու խորովում է նրա ջանը:

— Ա' Վարդ, քե մատաղ, ինչու ես տխուր,  
դարդդ ինչ ա, մի ասա, տեսնեմ,—քաղցրու-  
թեամբ հարցնում է նրանց Ճուղին:

— Վոյ, աղջի, բա զիտում չես. բա դու լսել  
չես,—հարցնում է Վարդին:

— չա, լսել եմ,—պատասխանում է Ճուղին,  
աղջի, բա քու նանն<sup>1)</sup> ինչ ասում:

— Ել ինչ պիտի ասիլ. ասել է ու պրծել.

<sup>1)</sup> Մացք:

իմ նանը ուզում չի ինձ նրան տալ,—պատաս-  
խանում է Վարդին ու արտասում:

— Վոյ, ես քու նանին ինչ ասեմ, որ լաւ  
ըլի, ա Վարդ. աեախ<sup>1)</sup>), բա նա Աստօն չունի:

— Որ ունենայ, նրան կը տայ էլի՝ պա-  
տասխանում է Վարդին:

— Աղջի, բա «նա» ինչ ասում,—հարցնում  
է Ճուղին:

— Նա էն օրին իրանց տատունց տանն ա-  
սել ա, որ ով մեր կամ ուրիշ շինի տղերանցից  
համարձակուի ինձ տանել, նա այդ տանողին  
գիւլլախորով կանի: Խաբարն ինձ Մեսի կնիկը  
բերաւ:

— Վոյ, աղջի, նա էդ կանի,—խօսում է Ճու-  
ղին,—նա եարագ-ասպաբ կապած է միշտ ման  
գալիս. նրա համար արին թափելը հանաք բան ա:

— Թող թափի ինձ գոռով տանողի արիւնը,  
թող զիւլլախորով անի նրան, միայն թէ ինձ  
ազատի եսիրութիւնից<sup>2)</sup>),—պատասխանում է  
Վարդին,—ես հէնց նրա համար եմ նրան այն-  
քան սիրում, որ նա սուր ու հրացան ա կրում  
միշտ. պատրօնտաշները<sup>3)</sup> խաչիկ-մաչիկ միշտ  
զարդարում են նրա դօշն ու թիկունքը: Մեր  
Մայանի հարսանքովը այնքան տղերանցից մի-

<sup>1)</sup> Աղջի: <sup>2)</sup> Գերութիւնից: <sup>3)</sup> Փամփուշտաների պայու-  
սակը:

այն նա կարողացաւ խնձորին գիւլով խփել <sup>1)</sup>  
ու գուլբաներն ստանալ:

— Դրուստ ես ասում, ա Վարդ, դրուստ,—  
խօսում է Ճուղին, — նա մեր շինի ամենաղոչաղ <sup>2)</sup>  
տղերանցից մինն ա, նրա գիւլէն չի խլաթում <sup>3)</sup>  
շատերն ասում են, որ նրա պէս եարաղ-թու-  
թան <sup>4)</sup> տղայ մնէլ Միրզիկեցի Կափրելն ա ե-  
ղել, որի գիւլէն միշտ թշնամու ունքամէջում,  
ուղղակի նրա երկու աչքերի մէջ տեղումն էր  
մեխում, ամա իմացիր, դու. որ եթէ քեզ ու-  
րիշ տան և նա քեզ տանողին գիւլախորով  
անի, այն ժամանակ նա էլ կը կորչի յաւիտեան:

— Ո՞նց կը կորչի, ո՞ւր կը կորչի. այդ ինչ  
ես ասում, յուզուած հարցնում է Վարդին:

— Աղջի, նրան Սիրիր կուղարկեն, իսկ դու  
դեռ թագը զլխիդ կը մնաս եթիմ, և քո ծնող-  
ները քեզ էլի մի ուրիշի կը տան, պատա-  
խանում է Ճուղին:

— Ա Ճուղի, ես քու ջանին մատաղ, ես քու  
ցաւն առնեմ, արտասուալից աչքերով աղա-

<sup>1)</sup> Երբ նորապակներին բերում են եկեղեցուց նորա-  
հարսնց տունը, այնտեղ դրսում մի ճողակի ծայրին ցցույ  
են մի խնձոր, իսկ ճողակից կապում են մի զոյտ նորա-  
հարսի ձեռքով գործած գուլպայ. տղէքն սկսում են հրա-  
ցանաձգութիւն և աշխատում են գնդակով խփել խնձո-  
րին ու թոցնել նրան ճողակի ծայրից. ում այդ յաջող-  
վում է, նա ստանում է գուլպաները: <sup>2)</sup> Ամենաքաջ: <sup>3)</sup> Զուր  
չի կորչում: <sup>4)</sup> Ջէնք բռնող:

չում է նրան Վարդին, ասա, բա ես ինչ ա-  
նեմ, ինչ հողն, ինչ ցեխը գլխիս տամ: Եթէ  
նա կորչի, ես էլ չեմ ապրիլ, կը գնամ ու Քի-  
քունց կամրջից ինձ կը նետեմ ցած. թող այն  
ժամանակ հարսանիքի շորերը հագիս, պսակի  
ուկէ թագը գլխիս իմ նանը տանի ինձ Տատի  
սեռն <sup>1)</sup> ու այնտեղ սև հողումը թաղի:

— Աղջի, լաւ, լաւ, խօսում է Ճուղին, ինչ  
ես Էղջէնց լաց լինում. սհաթիս հօ քեզ զօ-  
ռով մարդի չի տուան. դեռ ժամանակ շատ  
կայ, համբերիր, Աստուած ողորմած ա:

— Ո՞նց համբերեմ, ինչ անեմ, հարցնում  
է Վարդին:

— Զիք օրը գնա Նահատակ, — պատասխա-  
նում է Ճուղին, — այնտեղ դիլակ արա, աղաչի,  
պաղատի, երեսդ տափերը քսի, այն ժամա-  
նակ Աստծու հրեշտակը կը մտնի քու մօր  
սիրտը, և նա իր միտքը կը փոխի դէպի բա-  
րին:

— Աղջի, դու գնացել ես Նահատակ — հարց-  
նում է նրան Վարդին. ուրախութեան նշան-  
ներ արդէն երևում են նրա երեսին:

— Բա հիլ եմ արել. գնացել եմ, — պատաս-  
խանում է Ճուղին, — Եթէ չը գնայի, ինձ Մա-  
թունց Աւագի պէս քաջ ու ռաշիդ <sup>2)</sup> տղի հետ

<sup>1)</sup> Բանանցի գերեզմանատունը: <sup>2)</sup> Ճնորհալի:

չէին նշանիլ: Իմ նանն էլ չէր ուզում ինձ նրան տալ. ես էլ քեզ պէս շատ դարդ էի անում ու շատ արտասուք թափում. անցեալ տարի մեր չերիք աքօր հետ գնացի նահատակ, դիլակ արի այնտեղ, եկայ տուն և տեսալ, որ իմ նանի միտքը քիչ-քիչ փոխում է. Վարդավառին ինձ նշանեցին Աւագի հետ: Տեսնում ես մատանիներս, — աւելացնում է նա, ցոյց տալով Վարդին իր մատանիները:

— Հա, տեսնում եմ. ի՞նչ սիրուն են, — պատասխանում է Վարդին ու զմայլմամբ դիտում նրա մատանիները:

— Գնա նահատակ, — ասում է ջուղին, — և «նա» քեզ համար այսպիսի սիրուն մատանիներ կը բերի. քու նանը քեզ նրան կըտայ:

Վարդին ու Ջուղին ջրի շաղաթաթախ կժերը ուսերին դրած ուրախ-ուրախ Խըշլ աղբը լց վերագառնում են տուն: Նրանք սկսում են աւելի մեծ եռանդով պատրաստուել նահատակի տօնի համար: Նրանք խօսք են տալիս իրար՝ միասին դնալ ուխտ, մէկը աղերսանքի, միւսը շնորհակալութեան, սրտի խորին բերկրութեան արցունք թափելու նահատակի գերեզմանի վրայ:

Թալիս է չիք օրը: Վարդին Ջուղիի հետ միասին գնում է նահատակ, դիլակ է անում այնտեղ, գլուխը բարերն է թակում ու հակում էլեկտրիզացիայով:

պէս արտասուք թափում աչքերից: Ի՞նչէ լինում հետևանքը. այն, որ Վարդիի մօր միտքը փոխում է դէպի բարին, և նրան նշանում են իր սրտի սիրածի հետ, որը զարդարում է նրա մատները սիրուն ու շարմաղ մատանիներով: Հզօր ու մարդասէր է նահատակը. մուրազատու առուբը է նա: Ոչ մի իրան դիմողի, ճշմարիտ հաւատացողի բէյմուրազ չի անում նա, քանի որ դիտէ՝ ի՞նչ սոնկալի, ի՞նչ դաժան ու անողորմ պատիժ է դա. դիտէ, որ մահը, գըժուքն իր բոլոր սարսափներովն անդամ դրա մօտ ոչինչ են. ահը նա ու նաշխունը, երկուսն էլ գեռ ծաղիկ. հասակում իջել են գերեզման բէյմուրազ...  
— Այս մասնաւոր ամենայ չէ զայզ  
— Այս մասնաւոր ամենայ մասնաւոր ամենայ չէ զայզ  
— Հասնում է չիք օրը, աւագ չորեքշաբթին: Այդ օրը նահատակի տօնն է: Գիւղերում վաղ առաւտուանից նկատելի է մեծ իւար անցում. ջահիլները տնից տուն են վազում, կտրից կտուր կանչում են միմեանց. հարայչը ընկած է, շէնը. նրանք իրար իմաց են անում, հրետին պատրաստուել ու շուտով գուրս գալ գիւղից: Հարսներն ու աղջկերքը գուգուած. ու պ ճնուած, ջահիլ-ջիւան աղէքը սուր ու

թուր կապած, հրացանները կռներից կախած, փամփուշտներով թև ու թիկունքը-դարդարած խումբ-խումբ դուրս են գալիս զիւղերից և ուղերդում դէպի նահատակ:

Սիզաւէտ լեռներում հալրուած են ձիւները, դաշտերը ծածկուած են գոյնզգոյն ծաղիկներով. անտառները ծածկում են արդէն կանաչ տերեներով. տեղ-տեղ ծաղկում են հունին, սալորին, վազրի խնձորենին ու տանձենին. թըռչունները երգում են քաղցրաձայն երգեր. նրանցից շատերը թաւալւում են նորաբոյս խոտերի ու ծաղիկների մէջ և դէս ու դէն թուչուտում: Գարնան բացւելուն նրանք էլ ուրախ են. նըրանք էլ կարծես գնալիս լինեն նահատակ. այնտեղ իրանց մուրազն առնելու: Վտակներն արագ-արագ վազում են լեռներից, հովիտներում ու ձորերում իրար են խառնուում, կարծես զըրկում, համբուրուում են նրանք ու սիրոյ ողջոյն են տալիս միմեանց: Փոյնզգոյն թիթեռնիկները թուչուտում են ծաղկից ծաղիկ. նրանք ուրախ ու անհոգ են, թէւ շատ կարճ է նրանց կեանքը, բայց շատ բաղդաւոր են նրանք, քանի որ, թաւալուերով բոլոր ժամանակ բնութեան գրկում, ու լիովին վայելելով նրա հրաշալիքները, հեռանում են այս փշոտ աշխարհից իրանց մուրազն առած. իսկ զբանից բարձր

աշխարհումս... Մեղուները բզզում ու թռչուտում են նոյնպէս ծաղկից ծաղիկ. մինից իսկոյն ետ են թուչում. այդ նրանց ցանկացածը չի. միւսի ծաղկամանի մէջն են մտնում, թաւալում են նրա անուշահոտ փոշու մէջ և դուրս են թըռչում այնտեղից ուրախ-զուարթ. նրանք ժողովում են մայր-բնութեան նուիրական ծոցից նրա կենսատու հիւթերն ու տանում են փեթակ՝ սնունդ պատրաստելու ձմեռուան համար, որ երբ վչէ ցուրտ քամին, սկսի սառնամանիքն ու բուքը և դաշտերում թառամեն ծաղիկները, նրանք սովից ու կորստից լինեն ապահով իսպառ: Նրանցից շատերը բզզալով թուչում են դէպի նահատակի ձորը, կարծես նրանք էլ տանջուելիս լինեն սրտի դարգերից...

Գեղածիծաղ դաշտերի միջով անցնում են ուխտաւորների խմբերը: Տեղ-տեղ լաւում են երգի ձայներ. տեղ-տեղ հրացանների դղրդոց. ձորերը թնդում են ու գրմբում. նրանց արձագանքը մի սարից միւսին տալով, մի ապառաժից միւսին դիալեկտով, կրկնում է մի քանի անդամ ու գնում է հեռու, շատ հեռու և վերջապէս կորչում է ու անհետանում հեռու հորիզոնի մշուշապատ խորքերում: Երգերը երգում են հարսներն ու աղջկերքը. հրացաններն արձակում են տղէքը. ձորերն ու սարերն արձագանք

Են տալիս նրանց. օդը լցնուում է մի տարօրինակ, բայց վերին աստիճանի սքանչելի ներգաշնակութեամբ... Հարսներն ու աղջկերքը մանուշակ են քաղում ու զարդարում նրանով իրանց կրծքերը: Մանուշակ շատ է բուսնում ծաղկաւէտ դաշտերում, բայց նրանք ջոկում ու քաղում են միայն ամենամուգը, որը կոչում է «Հարսի մանիշակ»: Մանուշակը նրանք տանում են Նահատակի գերեզմանի վրայ սփռելու, այնտեղ շաղ տալու. Հացի ծառի տակին: Դիտում ես շրջապատող բնութիւնը, նայում ես քո առաջին փոռած հրաշալի պատկերին, և յանկարծ շրթունքներդ մեքենայաբար մրմնջում են.—

Զմեռն արդէն անցաւ, զնաց.

Հասաւ զարուն մեղ գրկարյաց:

Լեռներ, գաշտեր փալում են արդ.

Այնտեղ ծաղկունք բուսնում են շատ, բուրում են հոտ եղեմահրաշ....

Այնտեղ զեփիւռ փչում է արդ.

Մըմունջ ծաղկանց լուռում է շատ:

Հարսներ, աղջկերք վիտում են անդ.

Մանուշակ հարսի քաղում են նրանք:

Երգեր քաղցրիկ երգում են անդ.

Ողջոյն լեռանց, ողջոյն ծաղկանց,

Ողջոյն սիրու նորեկ զարնան

Նրանք տալիս են անդադար....

## XII.

Անցնենք Նահատակի սրբակալը: Այնտեղ հաւաքուած են բազմաթիւ ուխտաւորներ. ամբողջ ձորն ու մասակալի բլուրը ծածկուած են կանանց ստուար բազմութեամբ: Հեռուից դեռ զալիս են նոր ու նոր խմբեր. զալիս են Բանանցից, Խաչակապից, Կիրանցից, Փիրից ու Քարհատից: Նահատակին կից կանաչազարդ բլրից նայում ես հեռու. քո աչքերի առաջ ձգում են ճանապարհներ, որոնք գնում, կորչում են հորիզոնի խորքերում: Այնտեղ երկում են ուխտաւորների անվերջ խմբեր. Հարսներ ու աղջկերք զալիս են զիւգար-զիւգար<sup>1)</sup>, Հազար ու մի նազով-սազով, բրդենիքն ու Հարսի մանուշակը կրծքերին. զալիս են խունցիկ-մունցիկ անելով ու թափում են Նահատակի գերեզմանի վրայ:

Փայտի կուրծքն ու խորշերը ծածկուած են վառուող մոմերով. Նրանց թիւ ու համար ըլ կայ. ծխում է խունկը, որի ծուխը փուռում է զիւցազնի վրայ ու անուշ բաւրմունք տարածում չորս կողմը: Քահիլները թափուած ժայռի վրայ՝ համբուրում են նրան, համբուրում են նրա տակի գետինը, խմում են Նահատակի աղբը ջրից, իուանում են նրանով ձեռներն ու երեսները, որ

<sup>1)</sup> Խունց-խունց:

ցաւ չը դիպէի իրանց: Այնտեղ՝ ժայռի մօտ  
նրանց շրթունքները կամաց-կամաց շարժում  
են. ինչ են խնդրում նրանք, ինչ են աղերսում  
ո. Նահատակից, —այդ գաղտնիք է, այդ սրտի  
նուլրական գաղտնիք է....

Ժայռի մօտ մի չոր քեօթուկի վրայ նստած  
է խաչի դուլը, պառաւ Զանի աքիրը: Կա ի-  
րան նուլրել է խաչին. նա նրա ամենախոնարհ,  
ամենաանձնուէր սպասուհին է, այդ պատ-  
ճառով կոչւում է խաչի դուլ: Թափառերով մի  
ուխտատեղից միւսը, նա գնացող-եկողին խաչի  
անունով օրհնում է, զուշակութիւններ է ա-  
նում, ասում է՝ ինչ է դրած քո ճակատին և  
ինչ զոհ դու պէտք է բերես խաչին, որ նա  
քո խնդիրքը կատարի: Նահատակի գերեզմանի  
մօտ Զանի աքիրը միշտ օրհնում է ջահլինե-  
րին, ասելով՝ «ապրէք, ա խլզան<sup>1)</sup>», խաչը  
ձեր դիլակը<sup>2)</sup> կատարի, ո. Նահատակը ձեզ  
ձեր սրտի մուրազին հասցնի, ոչ բէյմուրազ մը-  
նաք դուք, ոչ ձեր աչքադրածը ձեր ձեռքից  
կարցնէք, ոչ նաչար<sup>3)</sup> օրի հանդիպէք դուք,  
խլզան. Զանի աքիրը ձեզ դուրբան<sup>4)</sup>, աղօթք  
արէք, տափից պաչեցէք, սուրբ ջրից խմեցէք,  
ո. Նահատակը ձեզ համար բարի խօսք կասի

<sup>1)</sup> Երեխայք, ջահլիներ: <sup>2)</sup> Խնդիր, ցանկութիւն:  
<sup>3)</sup> Խեղճ: <sup>4)</sup> Ձեզ մատադ:

Հայր Աստծուն:» Ջահլիներն ամենայն ջեր-  
մեռանդութեամբ կատարում են Զանի աքօր  
պատուէրը: Մի խումբ հեռանում է ժայռից,  
միւսն է մօտենում ու ծնկաչոք ընկնում այն-  
տեղ: Հետզհետէ ոգեորութիւնը մեծանում է.  
Համբուրում են չորս կողմի քարերը, հայի ծա-  
ռի արմատը, բունն ու ճղները, կարծես իրանց  
համբորներով նրանք միսիթարելիս լինեն դիւ-  
ցաղնի դժբաղդ մօրը: Ուռենու ճղները շարժ-  
ում են վեր ու վայր, կարծես բէյմուրազ Նախ-  
շունը միսիթարում է այդ պատկերը զիտելիս....

Առուակի ափին կանգնած ուխտաւորների մէջ  
մեծ կենդանութիւն է նկատում. այնտեղ հարս-  
ներ ու աղջկերք իրար կուլաւ են ընկնում:  
Այնտեղ մի զիւղից միւս զիւղը մարդի գնացած  
հարսները պատահում են իրանց ազգականնե-  
րին ու ընկերուհիներին. նրանք իրար զըկում  
են—իրար կուլաւ են ընկնում. մին էս կուլաւը,  
մին էն կուլաւը. նրանք համբուրում են ու ի-  
րար գարգեր հարցնում, միմեանց շորերն ու  
զարդարանքները զիտում, միմեանց կրծքի բըզէ-  
նիքը համարում:

— Վոյ, ես քե մատադ, Սապէտ,—լսում ես  
իրար կուլաւ ընկնողներից,—աղջի, բա մեր  
շէնը սիրտդ ուզում չի:

— Ես քու ջանին մատադ, Մական,—պա-

տասխանում է Սապէտը, — բա ինչ ա, ուզում  
ա. ես մեր շինի հողին ու ջրին մատաղ դնամ:

— Աեախ, բա մեր Դիմաց-տեղին կարօտում  
չես, — Հարցնում է Մայանը, — միտդ ա, ինչ-  
պէս Վարդավառին դնում էինք այնտեղ պա-  
րելու:

— Ո՞նց չի միտս, — պատասխանում է Սա-  
պէտը, — բա էնտեղ չի ինձ Քոլունց Սարգիս  
ապէրը շօթօշ տուաւ, յետոյ ուզեց իր տղին ու  
տարաւ Քարհամու:

— Աղջի, սիրտդ Քարհատի վրայ վէր ա դա-  
լիս: <sup>1)</sup>

— Զէ, հողեմ Քարհատի դլուխը, քանզուի  
նա: Ես միշտ մեր շինի վրայ եմ միտք անում.  
Ես մեր Դիմաց-տեղին, Բաղի կալին, Պիլօր հո-  
ղին, Ղաշխա-քարին ու Տատի սոլին մատաղ  
դնամ:

— Աղջի, — Հարցնում է դարձեալ Մայանը, —  
միտդ ա, ոնց էինք իրիկունները դնում Կար-  
մնջի աղբըից ջուր բերելու, ոնց այնտեղ հա-  
ւաքում էին Հարսներ ու աղջիկերք ու իրար  
նոր-նոր խաբարներ ասում, իրար դարդեր Հարց-  
նում. միտդ ա, ոնց էին տղէքը սարից վերա-  
գառնալիս մեզ վրայ կարմնջից դէպի աղբիւրը  
եղածաղկի վնչեր թափում:

<sup>1)</sup> Սիրում ես:

— Միտս ա, միտս, Մայան, — պատասխա-  
նում է Սապէտը, — ես մեր Կարմնջի աղբըի  
ակնին մատաղ դնամ: Աղջի, — Հարցնում է Սա-  
պէտը, — Քաւունց Սանդոխտին Վերդունց Հա-  
նէսին տուին:

— Հա, — պատասխանում է Մայանը:

— Աղջի, բա նա ուզում չէր նրան դնալ:

— Ուզում չէր, բայց տուին. նրան ով էր  
Հարցնում:

— Վոյ, նրա մօր կուռը չորանայ. աղջի,  
Սանդոխտը շատ լաց ըլաւ:

— Բա ինչ արաւ. երբ ժամ էին տանում  
պսակելու, երկու անգամ ուշաթափուեց. պսակի  
ժամանակ տէրը գուռվ նրան «Հա» ասել տը-  
ուաւ:

— Խեղճ Սանդոխտ. աղջի, բա նրա Զատին  
ինչ ըլաւ, — Հարցնում է Սապէտը:

— Զատին դնաց, երկիր-երկիր կօրաւ. նրա  
մասին ձէն ու ծպտուն չը կայ. մուրազը սըր-  
տումը դնաց խեղճ Զատին:

— Աղջի, բա Սանդոխտը Նահատակ չի եկաւ:

— Զէ, — պատասխանում է Մայանը, — մայ-  
ըը ըլ թողեց. մինչև պսակուիլը խեղճին խկի  
թող չէին անում, որ տանից դուրս գայ. վա-  
խենում էին, որ Զատին փախցնի նրան:

— Եթէ Սանդոխտը դար Նահատակ ու

այստեղ իր երեսը տափերը քսէր, նա իր մուրազին կը հասնէր, և նրա Չատին երկիր-երկիր չէր կորչիլ,— ասում է Սապէտը:

— Բա ինչ ա, կը հասնէր. խեղճ Սանդոյստ. նա դարդից կը մնոնի, — ասում է Մայանը:

Մի ուրիշ խմբի մէջ, սզնի ծառի տակին, մի մանկահասակ հարս ու մի նշանուած աղջիկ խօսում են իրար հետ:

— Հերիք, քե մատաղ, — խօսում է աղջիկը,  
— ասում ես սկեսուրի հետ եօլա դնալը դժուար  
ա հը:

— Բա ինչ ա, ա քաւ, դժուար ա. սկեսուրը որ կայ, հարսի համար թամամ ու օձ ա. հէնց էնա թերթը<sup>1)</sup> հանած. զորը գնում ես ետևիցդ եաշում ա, որ մի քեչ քէֆովը ըլ գնաս, իսկոյն կծի. հողեմ ես սկեսուրի զլուխը,  
— պատասխանում է Հերիքը:

— Աղջի, եանի ո՞նց ա կծում, — հարցնում է Քաւին:

— Ո՞նց պիտի. եթէ տեսնայ ջրից զալիս երեսդ բաց ա, զլուխդ կը հողի, արեւդ կը հողի, հէրդ կը թաղի, մէրդ կը թաղի. եթէ տեսնայ մարդիդ հետ խօսում ես պուճախում, շան օլինը զլիսիդ կը դնի, էնքան կանիծի:

— Աղջի, բա «ինքն» ինչ ասում:

<sup>1)</sup> Թունաւոր ատամը:

— Սողին:

— Հա:

— Նա ասում ա՝ իմ մօրը միշտ հնազանդ կաց. տան մեծը նա ա, — ասում է Հերիքը:

— Աղջի, բա դու հնազանդ չես կենում:

— Բա ինչ եմ անում, — պատասխանում է Հերիքը, — ոտները լուանում եմ, զլուխը քըթ-ում եմ, <sup>1)</sup> շորերը տանում եմ ու թոնքում թափում <sup>2)</sup>, ամա էլի ըլում չի. օր չի անցնում, որ նա իմ զլուխը հողի ոչ:

— Աղջի, բա քու նանն ինչ ասում, — հարցնում է Քաւին:

— Իմ նանն ասում ա՝ ա որդի, աշխարհիքի աղաթ <sup>3)</sup> ա դա. կը մեծանաս, դու էլ քու հարսների զլուխները կը հողես. ես էլ իմ հարսներին եմ ասում ես ձեր աղբերքը թաղեմ:

— Հերիք, էդ բրուշում աղլուխն ով ա քեզ համար աւել, — հարցնում է Քաւին, շոշափելով Հերիքի զլիսի աղլութը:

— Ինքը:

— Սողին:

— Հա:

— Աղջի, որտեղ ա առել:

— Բազարում. այնտեղ երկու շաբաթ դարբ-

<sup>1)</sup> Սաքրում եմ; <sup>2)</sup> Թոնքում մաքրում; <sup>3)</sup> Սովորութիւն:

նոցում բան ա արել, փող ա աշխատել ու ինձ  
համար էս աղլուխն առել իր ջիբի հալալ աշ-  
խատանքլից, — հպարտութեամբ պատասխանում  
է չերիքը:

— Ի՞նչ լաւ աղլուխ ա, — ասում է Քաւին, —  
ես էլ պէտք ա «նրան» ասեմ, որ ինձ համար  
էդէնց սիրուն աղլուխ առնի:

— Ո՞ւմ պտես ասիլ, Ուսէփին, — հարցնում  
է չերիքը, Քաւի նշանածի անունը տալով:

— Հա, — կարմրելով ու աչքերը գետնին լսո-  
նարհելով պատասխանում է Քաւին:

— Աղջի, էդ արծաթի թոխկէն <sup>1)</sup> ու բը-  
զէնիքը <sup>2)</sup> ով ա քեզ համար առել, — հարց-  
նում է չերիքը:

— «Կա» էլի:

— Ուսէփը:

— Հա:

— Աղջի, դու նրան տեսել ես, — հարցնում է  
չերիքը:

— Հա:

— Ո՞րտեղ:

— Թիմայ-տեղը:

— Ե՞րբ:

— Վարդավառին. ես պար էլ դալիս, նա  
ինձ շօրօշ տուեց:

<sup>1)</sup> և <sup>2)</sup> Արծաթի քամարն ու դրամները:

— Աղջի, բա էլ տեսել չես նրան:

— Տեսել եմ:

— Ո՞րտեղ:

— Տօնունց մարագի դռանը:

— Ո՞նց տեսար:

— Ես գնում էլ Մեծ-Ճորի աղբըից ջուր բե-  
րելու. երբ անցնում էլ մարագի դռնով, նրան  
տեսայ այնտեղ կանգնած:

— Աղջի, բա չը վախեցար — հարցնում է չե-  
րիքը:

— Բա ի՞նչ արի. շատ վախեցայ, — պատաս-  
խանում է Քաւին, — կարծեցի թէ նա եկել ա  
ինձ վախցնելու. քամարից նա կապած ունէր  
լսանչալ ու բլուզ <sup>1)</sup>, տակ կախած էր բեր-  
գանկան <sup>2)</sup>, լսկ ամբողջ գօշն ու թիկունքը  
ծածկուած էր պատրօններով <sup>3)</sup>:

— Աղջի, հետդ խօսաց:

— Բա ի՞նչ արաւ, խօսաց:

— Ի՞նչ ասեց:

— Երբ ինձ տեսաւ, իսկոյն լսանչալը հա-  
նեց ու ասաց. «Անդօն ապօր աղջիկ, քու հօրն  
ու մօրն ասա՛, որ ես քեզ տանելու եմ ինչ որ  
էլ լինի. օր էս ետք դու իմ ապրանքն ես. ով  
քեզ վրայ աչք դնի ու ուզի տանել, նրան էս

<sup>1)</sup> Ատրճանակ: <sup>2)</sup> Հրացան: <sup>3)</sup> Փամփուշաներով:

խանչալով թիքա-թիքա<sup>1)</sup> կը կոտորեմ...»  
Ես շատ վախեցայ. մի խօսք էլա չասեցի նրան,  
վախայ աղբիւրը, որտեղ հարսներ ու աղջկերք  
շատ կային. նրանց հետ միասին վերադարձաւ  
տուն:

— Ուսէփիը Տօնունց մարագի դռանն էր դեռ,  
Հարցնում է Հերիքը:

— Զէ, գնացել էր:

— Բա քու հօրն ու մօրն ի՞նչ ասեցիր:

— Ինա գնացի տուն ու թագուն իմ նա-  
նին ասեցի Ուսէփի խօսքերը. նա էլ ասեց իմ  
հօրը. հայրս երբ լսեց, ասեց մօրս՝ «Նա էնքան  
զէնքեր որ գիշեր-ցերեկ իր վրայ պահում ա,  
ինչ ասես կանի, մարդ կը սպանի, արին կը  
թափի. ա կնիկ,—դարձաւ հայրս իմ նանին,—  
եկ Քաւելին Ուսէփին տանք. նրա ճակատին էլ  
բալքի<sup>2)</sup> էդ ա գրած:» Կանս ասեց՝ «Լաւ,  
բայց թող մի իրան էլ Հարցնենք:» Գիշերը  
երբ պարկեցինք քնելու, նանս զրկեց ինձ ու  
կամաց ձախով հարցրեց. «աղջի, Տէրունց Ու-  
սէփին սիրտդ բռնում ա, ուզում ես նրան գնալ.  
Պրուստն ասա, մի թագցնիլ:» Ես երկար ոչինչ  
չէի պատասխանում, շատ էի ամաչում, մինչեւ  
անգամ լաց եղայ. նանս մի քանի անգամ համ-  
բուրեց ինձ ու էլի կրկնեց իր հարցը: Չը դի-

<sup>1)</sup> Կտոր-կտոր; <sup>2)</sup> Գուցէ;

տեմ ինչպէս համարձակութիւնս եկաւ, բերանս  
դրի նանիս ականիջին ու ասացի. «ա նան, հա:»  
Նանս էլի համբուրեց ինձ ու ասաց. «գէ լաւ,  
հիմա հանգիստ քնիր:»

— Աղջի, բա քեզ ո՞նց նշան դրան,—հարց-  
նում է Հերիքը:

— Ո՞նց պլուի. մի երեք օրից յետոյ Ուսէփիի  
դալին<sup>1)</sup> եկաւ ու ինձ նշան դրաւ նրա հա-  
մար:

— Մատանին ով քո մատում դրաւ:

— Ուսէփիի դալին:

— Քեզ ով նրա առաջը դուրս բերաւ:

— Իմ մեծ քոլը:

— Թիւնիի կնիկը:

— Հա:

— Աղջի, բա դու ուրտեղ էիր թագ կացել:

— Մեր ամբարի քամակում. չէի ուզում  
դուրս գալ. ամաչում էի. ինձ գոռով այնտեղից  
դուրս քաշեցին:

— Աղջի, բա քու Ուսէփը եկել չէր նշան-  
դրէքի:

— Զէ, նրան բերել չէին. դային նրան թող  
չէր արել գայ:

— Բա դու նրան էլ չես տեսել:

— Զէ, բայց այսօր կը տեսնեմ:

<sup>1)</sup> Քեռին:

— Ո՞րտեղ:  
 — Այստեղ:  
 — Նա էլ է գալու Նահատակի:  
 — Հա, — պատասխանում է Քաւին:  
 Յանկարծ նրա երեսը կարմրում է. սաստիկ յուղուած՝ մի ակնթարթում նա թաղնում է կտնանց մի ստուար խմբի մէջ. մօտիկ բլրակի վրայ տղերանց խմբի մէջ նա յանկարծ նկատում է իր Ռւսէփին, ոտից մինչև զլուխ սպառաղինուած: Ռւսէփը մեծ ուշադրութեամբ հեռուից դիտում է կանանց խուժբը, աշխատելով գտնել այնտեղ իր Քաւին ու զոնէ մի անգամ տեսնել նրա դալամ ունքերը, կարմիր թշերն ու սւերակ աչերը, բայց այդ նրան չի աջողւում. Քաւին անհետացած է ժայռի մօտ կուտակուած կանանց ստուար խմբի մէջ: Ռւսէփին միակ միսիթարութիւն մնումէ գնալ՝ երբ հերթը գայ տղերանց, ու աղօթել նոյն տեղը, որտեղ անշուշտ չոքած ու աղօթած կը լինի Քաւին, ու ինդրել ս. Նահատակից, որ նա նրանց երկուսին միմեանցից չը զցի ու հալալ պատկի արժանացնի:

## XIII.

Նահատակին կից բլրակի վրայ յանկարծ ե-

րեռում է տէրը. նա շուրջառ է ծածկում ու մաշտոցը բանում: Ռւստաւորները հաւաքւում են տէրի շուրջը, որը թափօր է կատարում ս. Վարդան Նահատակի բարեխօսութիւնը խնդրելով մեր երկրի, մեր տուն ու պուճախի, վար ու ցանի, կալ ու կուտի, բաղ ու բաղչի, հանդ ու հանդաստանի համար: Տէրը աղօթում է, ուխտաւորներից շատերը լաց են լինում: Թափօրի վերջում տէրը դիմում է իր շուրջը խըմբուած ջահիներին հետևեալ քարոզով. — «Ա որդ զիք, տարի էսօր դուք բան ու զործ թողած գալիսէք այս սրբավալին ուխտ: Ի՞նչ դարդ ունէք, ի՞նչ ցաւ ունէք, — այդ ձեզ ա յայտնի: տէրը չը դիտէ այդ. նրա ի՞նչ զործն ա այդ իմանալ, միայն նա կը ցանկանայ, որ ս. Նահատակը ձեր սրտի զիլակը տալ, և չայրն Աստուած ձեզ ըէմուրազ չը զրկի այս անցաւոր աշխարհից: Ի՞նչ բան ա մուրազին հասնելը, զիտէք, — զա ամենաբարձր, ամենալին, ամենանուիրական ցանկութեան իրագործումն ա, դա սրտի հովութիւն ա: Աստուած տայ, որ ում սիրտը այժմս ալրում ու խորովում ա, շուտով հովանայ. շուտով նրան չայրն Աստուած մեր ս. Նահատակի բարեխօսութեամբ մի դեղ, մի դարման տայ....

Դիտէք, որդիք, ով էր ս. Վարդան Նահա-

տակը. նա էր մի շատ քաջ ու իզիթ տղամարդ, եկած այստեղ մեր երկրը հեռու տեղերից: Նրան բնակարան էին ծառայում սարերն ու ձորերը: Խաղաղ ու հանգիստ կեանքը նա ըլ գիտէր ինչ բան է. նրա սիրտը չէր կարողանում հանգիստ տեղը կենալ, երբ նա տեսնում էր մարդկանց անարդարութիւնն ու չարութիւնը, ուստի, սիրելիք, նա փնտում էր միշտ արդարութիւն, սէր ու միութիւն մարդկանց. նա միշտ պաշտպան էր թովերի, հալածուածների, ու ճնշուածների. նրա անունը հաւատ, յոյս ու խրախուսանք էր ներշնչում բոլոր թշուառներին, որոնց այն սովկալի ժամանակները մեր երկրում միակ ապաւէնն էր նա: Նա շատ քաջ էր ու սիրում էր քաջ մարդկանց, թէև իր թշնամիներից լինէին նրանք. ասում էր նամարդութիւնը և նամարդի երեսին թքելով էր ճանապարհում սուն կուի դաշտից, անարժան համարելով կուել նրա հետ, ներկել իր թուրը նրա արիւնով: Բայց միշտ փշով ու տատակով էր ծածկուած նրա ճանապարհը. թշնամին շատ էր գօրեղ ու շատ անգութ, և նա, անօրէնը, վերջապէս իր յաղթանակը տարաւ, նահատակելով գիւցազն Վարդանին հըէ այն սուրբ ժայռի տակին, այն կարկաչակոս առուակի ափին, այն ողբացող ուռենու տակ:

Հասմու նա իր մոռրազին, ոչ. վիճակուեց նրան երջանկութեան գոնէ մի օր, ոչ և ոչ: Աշխարհս դեռ շատ փուչ է. արդարների համար նա շատ նեղ է. Վարդարը յաճախ գալիս է այս աշխարհը ու անհետանում շուտով բէյմուրազ: Թեռ շատ տարիներ, շատ դարեր են հարկաւոր, որդիք, որ արդարներն այս աշխարհում իրանց արժանի վարձատրութիւնն ստանան. Նրանց մընում է միայն երկնային յաւիտենական արքայութիւնը, իսկ չարը, անպիտանը, նենդը, ստորն ու վատը յաճախ վայելում է այս աշխարհում երջանկութեան բաժակը մինչև յատակը, կարծես Աստուած միայն նրա համար լինի ստեղծած այս հրաշալի բնութիւնը, այս ծաղկաւէտ դաշտերը, այն սիզաւէտ լեռները, որոնց վրայից իջնող վտակները տանում են ամբողջ աշխարհին կեանք ու կինդանութիւն: Ի՞նչ վարձատրութիւն ստացաւ Վարդանն այս աշխարհում. մի բան միայն, այն էլ իր եղերական մահից յետոյ. նա ստացաւ իր նազելի նախշունի յորդառատ արցունքը, որից գոյացաւ ահա այն մաքուր, այն անմահական աղբիւրը, որի սուրբ ջրով գուք այսօր լուացիք ձեր երեսներն ու ձեռքերը: Ճատերը նրա պէս մարդկանցից յաճախ դրան էլ չեն արժանանում այս դաժան աշխարհում... Վարդանն էլլի եր-

ջանիկ էր, քանզի նրա վրայ թափուեց սիրած կոյսի աչքերից աղի ու դառն արցունք, արցունք անսահման, վսեմ, բարձր ու յափտենական սիրոյ... չարսներ ու աղջկերք, սիրեցէք ձեր սրտի ընտրածներին այնպէս, ինչպէս նախշոնն էր սիրում Վարդանին. եղէք նրա պէս հաւատարիմ ու անձնուէր: Աէրը սուրբ խորհուրդ է. նա մի տեսակ Աստուածավին կրակ է, որը պահուած է մարդկալին սրտի ամենանուիրական անկիւնում: Կան մարդիկ, որոնց սրտերում այդ կրակը թագուած—ընթեղուած է մոխրի մէջ, այդ պատճառով նրանք չեն զգում նրա տաքութիւնը. նրանց սրտերը միշտ սառն են ու քարացած, և նրանք չը զիտեն՝ ի՞նչ է բարին, աղնիւն ու վսեմը. թշուառ ու հալածուած եղբօր ողբն ու դառն արցունքը նրանց սրտերը չեն շարժում երբէք: Կան մարդիկ, որոնց սրտերում մոխրի չը կայ, այդ պատճառով կրակը միշտ վառ է այնտեղ, և նրանց սէրը դէպի մերձաւոր եղբայրը, դէպի ամբողջ մարդկութիւնը, դէպի վսեմն ու բարձրը միշտ անսահման է ու անհուն... Տայ Աստուած ձեզ բոլորիդ սրտի մաքրութիւն. թող նա հեռու պահի ձեր սրտերից Աստուածավին կրակը հանդցնող, թաղող ու ընթեղող մոխրիրը:

Քահիլ-ջիւան տղէք, եղէք նահատակ Վար-

դանի պէս միշտ քաջ ու մեծահոգի, միշտ յանդուգն ու համարձակ. երբ ձեր առաջին կանդնած տեսնէք նենդամիտ թշնամուն, երես չը դարձնէք նրանից. թող նա չը տեսնի ձեր թիկունքը, թող նա չասի երբէք, թէ վատ ու նամարդ էք դուք: Գնացէք նրա դէմ միշտ մարդ ու մարդանայ. եթէ փախուստ տաք նըրանից, այն ժամանակ թող հարամ լինի ձեր գլխներին ձեր այդ փափախները. այն ժամանակ թող պապանձուի ձեզ տղամարդ ասողի լեզուն: Կապել էք դուք թուր ու խանչալ, կախել էք ձեր թևերից հրացան, խաչիկ-մաչիկ կապել էք ձեր թիկունքներից ու դօշերից պատրօնդաշներ ու զարդարուել էք շողշողուն փամփուշտներով. զիտէք ինչի համար են դրանք. թողերին ու թշուառներին պաշտպանելու, մարդկային կեանքը, պատիւն ու կայքը կորստից փրկելու, անարդարութիւնն ու վատ մարդկանց թշնամութիւնը հալածելու. Աստուած զրա համար է միայն տուել մարդու ձեռքը զէնք: Երբ զնաք կեռանաք այստեղից, երբ ցրուէք ձեր զիւղերը, չը մոռանաք երբէք տէրի խօսքերը. օրհնեալ լինիք դուք, որդիք, միշտ ու յաւիտեան:»

Տէրը վերջացնում է իր քարոզը. ուխտաւորները մօտենում են ու համբուրում մաշտոցն ու

տէրի աջը: Նրան աջակամբուր են տալիս, և  
նա օրհնութեամբ ընդունում է, ինչ որ տալիս  
են: Երբ այդ բոլորը վերջանում է, կանաչ խո-  
տերի ու հոտաւէտ ծաղիկների վրայ, վարդի  
թփերի ու մանուշակի թաղերի արանքներում  
փռում են սուփրաներն ու խումբ-խումբ շար-  
ում: Նրանց շուրջը: Սուփրում Աստծու տուա-  
ծից ամեն բան կայ. Հաց, լոբի, տեաղցը, բան-  
ջար, սողան, խանձիլ, շուշան, պէքի, սանդ-  
լուկ: Երբ բոլորն էլ բոնում են իրանց տե-  
ղերը, տէրն օրհնում է Հացն ու ինքն էլ ուխ-  
տաւորների հետ կանաչ խոտերի վրայ ծըլպը-  
տակում<sup>1)</sup>: Կա նստում է Հասակաւոր տղամարդ-  
կանց հետ. Նրա սուփրան առանձին է: Հարս-  
ներն ու աղջկերքը նստում են տղամարդկանցից  
ջոկ և ուտելիս զեանդրուկներով կիսով չափ  
ծածկում են երեսները: Երբ մի տղամարդ պա-  
տահմամբ անցնում է նրանց մօտով կամ նա-  
յում է նրանց կողմը, օ՛հ, ինչքան ամաչում ու  
կարմրում են խեղճերը. «ա տափ, դու ճղուի,  
ես մէջդ ընկնեմ», —ասում է իւրաքանչիւրն  
իր մտքում, այնքան մեծ է նրանց ամօթխա-  
ծութիւնը. կարելի բան է միթէ, որ տղամարդը  
տեսնի կնիկարմատին Հաց ուտելիս:

<sup>1)</sup> Փալապատիկ նստում:

Վերջանում է Հայկերոյթը. սուփրաներն ու  
նրանց միջի ային-օվինը հաւաքռում են ու բող-  
ժայ կապում: Այդ միջոցին տղէքը խմբում են  
մօտակայ կաղնի ծառի տակին ու հրացաններն  
ուսերից հանում: Պիմեանց ձեռքերից նրանք  
վերցնում են հրացաններն ու մեծ ուշադրու-  
թեամբ տնտղում. օ, ինչպէս այդ բոպէին փայ-  
լում են նրանց աչքերը. Նրանց ջանը կրակի  
պէս վառւում է. Նրանց ձեռքերը դողդողում  
են հրացանը շոշափելիս, կարծես իրանց ջանի  
կրակ սիրուհուն լինեն նրանք փայփայելիս,  
կարծես նրան լինեն ալրուղ կրծքին սեղմելիս:  
Ի՛, ինչ եմ ասում, ամենախելագար սիրահարն  
իր սիրուհուն այնպէս չփ փայփայիլ, ինչպէս  
մեր տղէքն իրանց հրացաններն են փայփայում  
ու պաշտում. Նրանցից շատերի բանդերն ար-  
ծաթից են շինած. դարանն ու զոնդաղը նոյն-  
պէս արծաթապատ են. լուլի մէջը փայլում ու  
հրկրատում է հայելիի պէս: Տղայ ես, փամ-  
փուշտը զիր մէջը, վէտին հուփ տուր, և գիւլ-  
լէն խոկոյն պզզալի դուրս կը թռչի հրացանի  
ըռխից, կը գնայ, կը գտնի թշնամուդ ու տեղն  
ու տեղը հանգույմերոց կանի նրան: Բա էլ մնց  
չի կտրիմը փայփայի իր հրացանը: Նրա նանը  
չը մեռնի. Նրանից աւելի հաւատարիմ ընկեր  
ու պաշտպան մարդ կարող է գտնել արդեօք:

Երբ նա կախուած է քո ուսից, երբ նրա փամ-  
փուշտներն աջ ու ձախ զարդարում են դօշդ ու  
թիկունքդ, այն ժամանակ գնում ես արխալին <sup>1)</sup>  
դորն ուզում ես. սար ու ձոր, դաշտ ու քոլ <sup>2)</sup>  
ոտիդ տակն ես տալիս, ոչ լիսի ես նայում, ոչ  
մթնի, ոչ մարդ, ոչ զազան, ոչ ասլան <sup>3)</sup>, ոչ  
զափլան <sup>4)</sup> քո առաջը չեն կարողանում կտրել,  
կարծես Աստուծու պահապան հրեշտակը միշտ  
լինի քո քամակում կանգնած: Պատահում ես  
թշնամուդ, ձեռքերդ չեն դողում, սիրտդ չի  
թուլանում, վիզդ նրա առաջին չես ծոռում, այլ  
յանդուգն ու համարձակ նայում ես նրա երե-  
սին, խրոխտ ձայնդ լսել ես տալիս նրան, և  
երբ նա ուզում է քո կեանքի թելը կտրել, քեզ  
կտրոպտել ու սպանել, ձեռաց հանում ես հրա-  
ցանն ուսիցդ, փամփուշտը գնում նրա մէջ ու  
մահաբեր գնդակը նրան փէշքէշ ուղարկում, և  
նա, սատանի ձազը, պզզալով գնում է ու նրա  
հակատամիջում մեխտում: Նա էլ է ուղարկում  
մահաբեր գնդակ. նա էլ զէնք ունի. այնքան  
նամարդ չես, որ անդէնի դէմ կուես: Կա քեզ,  
դու նրան՝ փոխադարձաբար ուղարկում էք զըն-  
դակներ. մէկը ձեզանից, կամ հէնց երկուսդ էլ  
կարող է պատահել, որ ընկնէք, բայց ոչ նա-

1) Պիամիս; 2) Անտառ; 3) Ա; 4) Առիւծ և փագր:

մարդի, այլ քաջի ու հերոսի մահով: Կտրիմի  
համար զա նախանձելի մահ է, ուրեմն ոնց  
կարող է նա չը սիրել իր հրացանն ու փամ-  
փուշտները:

Տղէքը սարքում են. իւրաքանչիւրը վերց-  
նում է իր հրացանն իր ձեռքն ու կանգնում  
որոշուած տեղում. նրանք պատրաստում են  
նշանի գնել: Տղերանցից մինն ընտրում է նը-  
շանը. նա ցոյց է տալիս շրջապատող ծառերից  
մէկի ծայրին մի չոփ, մի փոքրիկ ճղնիկ ու  
առաջարկում է նրան գնդակով խփել, կոտրել  
ու թոցնել այնտեղից: Տղէքը համաձայնուում  
են, կամ մի ուրիշ, աւելի դժուար նշան են  
ընտրում ծառերի ծայրերին, ու վերջապէս ըս-  
կուում է հրացանաձգութիւնը. գնդակները մի-  
մեանց ետևից գնում են դէպի նշանը. նրանց  
պղզ-վրզոցն ականց է ծակում. թինդ ու դղբր-  
դոցն ընկնում է հահատակի ձորը. արձագանք-  
ներ մինը միւսից խրոխտ լսում են շրջապա-  
տող լեռանց խորշերում: Հարսներն ու աղջկեր-  
քը շարէ շար կանգնած ըլրակի զագաթին՝ մեծ  
հետաքրքրութեամբ դիտում են հրացանաձգու-  
թիւնը: Նրանց հայեացքները տղերանց ջանք  
կրակ են դցում, և իւրաքանչիւրը նրանցից  
զործ գնելով իր բոլոր հմտութիւնը՝ աշխատում  
է առաջինը խփել նշանին: Պրցումը գնալով

տաստկանում է. գնդակների անընդհատ դնացքը դէպի նշանը շարունակում է: Տղէքն էլ աջալամա<sup>1)</sup> չեն տալիս: Հեշտ բան է, ինչ է աջալամա տալ, անտարբեր մնալ դէպի մրցումը, երբ ետևից հարիւրառը սեռակ աչեր, կրակի պէս միշտ վառ ու այրող նայում են քեզ վրայ. էլ ո՞նց չի պէծին-կրակին<sup>2)</sup> անես նշանին էփելու համար. քիչ է մնում կեանքդ մահու տաս, քանի գիտես, որ այդ րոպէին նայում են լատուկ քո ետևից մի զոյգ կրակոտ աչքեր, աննման, հրաշալի, հրասպորիչ ու հոգինանիչ աչեր, և այստեղ, պճնազարդ հարսների ու աղջկերանց խմբի մէջ՝ քեզ սպասում է կեանքի ամենամեծ ու ամենաբարձր պարգև... Փամփուշտները միմեանց ետևից դնում ես հրացանի մէջ ու հուզ տալիս նրա վէտին. նա թնդում է. ձորերն ու սարերը դղբում են կրկին. նայում ես նշանին. նա գեռ տեղն է. իսկ «նա», ջանի կրակը, գեռ նայում է քեզ վրայ. նրա լոյսը քեզանից չի կտրում. գիտես, որ նա ուզում է, աղաչում է այդ րոպէին բոլոր սրբերին, որ դու առաջինը լինես տղերանց մէջ. գիտես, որ նրա սիրտն այդ րոպէին հալ ու մաշ է լինում, վեր ու վայր թռթռում. նրա

<sup>1)</sup> հանգիստ չեն առնում: <sup>2)</sup> զատ աշխատես, ոյժիցդ վեր:

աչքերից կրակ է թափում, որը զուշի թևով զալիս է ու ընկնում քո սիրտը և քեզ էլ կրակ կտրում: Դինում ես էլի մի փամփուշտ, էլլի հուպ ես տալիս հրացանի վէտին. թնդում է նա. յանկարծ մի ընդհանուր իրարանցում է ընկնում տղերանց մէջ. հրացաններն ու փամփուշտները կարծես սառչում են նրանց ձեռքերում. լսում են ուրախութեան ու զայրութիւ աղաղակներ. ցրւում է վառօդի ծուխը, նայում ես նշանին. նա արդէն չըկայ. գնդակդ վերջապէս հասել է նրան, պոկել է ծառի ծայրից, տարել ու անհետացլել է նրան նահատակի ձորում: Ո՛հ, ուրախութեանդ էլ չափ չը կայ. բայց քեզանից շատ՝ գիտես, որ ուրախ է նա. այդ քեզ նոր զուալդ է տալիս, և դու կարծես թշնամու մի ամբողջ բանակ լինես ջարդած, ջախջախած... «Հալալ ըլի քու կերածը, զու լաղթեցիր», —լսում ես չորս կողմիցդ. ուրախութիւնդ անչափ է ու անսահման. դրանից աւել էլ ինչ վարձատրութիւն կարող է լինել աշխարհում կտրիծի համար: Նա այդ վարձատրութիւնը ստանում է նահատակի տօնին Տեմբլայ ձորում:

Տղէքը կրկին ընտրում են նոր նշան. կրկին սկսում է հրացանաձգութիւնը, որը վերջանում է կրկին մի նոր բաղդաւորի յաղթութեամբ: Օ՝

բաղդաւոր են յաղթողները, շատ բաղդաւոր. նրանց խաբարը գնում է օխտը սարի, օխտը ձորի քամակ, անցնում գիւղից գիւղ, ու ջահիլ-ջուռ աղջկերանց սրտերը հալ ու մաշ անում.... Յանկարծ կանաչ տախտի մէջ երևում է դաւալն իր խմբով: Կա ճըւծուացնում է զուռնէն. այդ նշանակում է՝ «տղէք, լաւ բօլ<sup>1)</sup> պէծին-կրակին<sup>2)</sup> արիք, լաւ բօլ գիւլլա-բարութ փը-չացրիք. դրանով ձեր սրտի եարան սաղանալ չի. հմի էլ եկէք այստեղ ու այս կանաչ, ծաղ-կափթիթ տախտում հարս ու աղջկերանց պա-րերը տեսէք, ձեր սրտի դարդերին այստեղ դար-ման փնտուեցէք:» Հրացանաձզութիւնը դադա-րում է: Տղէքը գնում են ու շարւում դաւալի չորս կողմում: Նրա շուրջը կազմում է մի մեծ շրջան: Կանայք խմբում են դաւալից մի քանի քայլ հեռու: Հարսները ծածկում են երեսները զեանդրուկներով, որպէս զի տղէքը նրանց աչք-ունքը չը տեսնեն: Հասակաւոր կանայք աղ-ջկերանց հերթով դուրս են բերում դաւալի ա-ռաջը: Ակզբում նրանք դիմադրում են, շատ են դէս ու դէն անում, շատ են նազ ու սազ բանեցնում, բայց ճար չը կալ, վերջապէս հա-մաձայնուում են ու գուրս դալիս դաւալի առա-

<sup>1)</sup> Բաւականին: <sup>2)</sup> Չարչարուեցիք:

ջը: Կրանք պարում են. ո՞նց են պարում. լորն ու կաքան անգամ կը նախանձեն նրանց, այն-պիսի քնքշութեամբ են նրանք դէս ու դէն շարժում ու սուզրուղ տալիս կանաչ խոտերի ու ծաղիկների վրայ: Կրանք կարծես ովէ մէջ լողում են. աչքդ չի տեսնում, թէ ինչպէս են նրանց ոտները գետնին դիպչում: Դէ էլ ո՞նց չի կրահան լինեն տղէքն այդ հրաշալի պատ-կերը դիտելիս: Մի աղջկկ վերջացնում է պա-րը, միւսին են մէջ բերում, և այդպէս դաւա-լի առաջով միմեանց ետևեց անցնում են սի-րուն աղջիկներ ու նազելի հարսներ, որոնք շատ սրտերի մէջ են կրակ զցում ու գիւլլա-խորով անում նրանց: Ազապ տղէքն այստեղ իրանց նեասիբը<sup>1)</sup>, իրանց սրտի ընտրեալին են փրնտ-ուում, նրան, որին ճակատագիրը նշանակել է իրանց համար, որը դարման կարող է անել նրանց դարդին ու վերջ դնել նրանց ցաւերին: Նահատակի տօնին ընտրածը Աստծու Իրան ուղարկածն է: Կա վարդանի պէս ջիւան տղէք կը ծնի. նա նախշունի պէս հաւատարիմ կը լինի իր մարդին, և միայն զերեզմանի խոր-հրդաւոր խաւարը կարող է նրանց բաժանել միմեանցից:

Պարում է դաւալի առաջին մի կարմրաթշիկ,

<sup>1)</sup> Իրանց վեճակուածին:

նազելի աղջիկ: Անթիւ, անհամար աչքեր ուղղուած են գէպի նա: Զգալով այդ, նա աւելի ու աւելի է կարմրում. ամենահրաշագեղ վարդի ըռեխն ի՞նչ է, որ այդ բոպէին համեմատուի նրա հետ. աշխարհիս երեսին ոչ մի տեղ, Աստծու իրան պատի տակին անդամ, նոյն իսկ Եղեմում, ուր էր զրախտը, առաջին մարդկանց ծաղկափթիթ երջանկավայրը, այդպիսի վարդ չի բացուել երբէք... Նա շարունակում է պարել: Կայ մէկը տղերանց մէջ, որը նրան աչքադրել է վաղուց. նա այդտեղ առաջին անդամն է մօտից տեսնում նրան. նրա սիրտը թռութում է. նա էլ չի կարողանում իրան զսպել, դուրս է դալիս տղերանց խմբից, կանդնում է զաւալի առաջին ու հրապարակով շօրօշ է տալիս պարող աղջկան. նա ընդունում է շօրօշն ու կրակ կտրած շարունակում իր պարը: Այդ նշանակում է, որ ջահիլ տղէն մասամբ իր մուրագին հասաւ. նա երկար վնտում էր նրան և այդտեղ վերջապէս գտաւ, խորհրդաւոր առաջարկութիւնն արաւ, թայ ու թիւշ<sup>1)</sup> տղերանց առաջին առաջարկեց նրան իր ձեռքն ու սիրտը. և նա ընդունեց այդ առաջարկը: Նրանք այդ բոպէից միմեանց են պատկանում. նրանք արդէն իրանց շրթունքները մօտեցնում են եր-

<sup>1)</sup> հասակակից:

ջանկութեան բաժակին, իսկ նրանց հայրերին ու մայրերին մնում է խնամութիւնն սկսել, իրար տներ խօնչա<sup>1)</sup> ուղարկել ու իրանց ջահիլ-ջնուլ խիզանի պսակի հոգսը քաշել, որ երբ ժամանակը հասնի, զաւալն հրետին իր զունին փչի նորափեսանց տան կտրին... ի՛, մուրագեթրան է ո. Վարդան Նահատակը. նրա սուրբ զօրութեանն ու նրա լիս երեսին մատադ գնամ ես:

Արեգակը կամաց-կամաց թեքւում է գէպի արևմտաք: Ուկտաւորները պատրաստում են ճանապարհուելու տուն: Ղաւալն իր խմբով կանգնում է տեղից: Տղէքն իսկոյն ձեռք ձեռք են տալիս ու մկանում եալլին ու զօմփին<sup>2)</sup>, պարելու հերթը հիմա նրանցն է: Հարսներն ու աղջկերքը վերցնում են մի-մի շիշ նահատակի աղբը սուրբ ջրից ու կրկին գիւղար-գիւղար, հազար ու մի նազով-սաղով, հարսի մանուշակ քաղելով ողեւորում են իրանց գիւղերը: Տղէքը զաւալի առաջն ընկած՝ եալլի ու զօմփի պարելով գնում են նրանց ետևից:

Ջահիլ-ջնուլ խիզանն ուրախ են ու զուարթ. նրանցից շատերն այնտեղ կանաչազարդ տախտում, զաւալի առաջին, իրանց մուրագի տուտը<sup>3)</sup> բռնեցին. ապագան արդէն ժպտում է

<sup>1)</sup> Քաղցրաւէնիք, միրգ ու գաթաներ: <sup>2)</sup> Զօմփին պարում են երկու հոգի ձեռք ձեռքի տուած: <sup>3)</sup> Մայրը:

Նրանց: Ահը զուր չեն նրանք գնում Նահատակ  
ու աղօթում այնտեղ մուրազատու դիւցաղնի  
գերեզմանի վրայ...

1897 թ. Բանանց.



6461

2013

2013

